


2942

ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀՈՒՐՁԸ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

I



ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՅՈՒՆ «ԳՐՈՒ»
ՌՈՍՏՈՎ-ԴՐԵՆ—1986

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐԾՈՎՑԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱԲՈՐԱՏՈՐԻԱ

491.99
L-30



Новгород
1949 г.

ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՈՒՐՋԸ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հ. ԱՎԱԳՅԱՆԻ խմբագրաբյամբ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐԾՈՎՑԱՆ ՅԵՐԿՐՈՎԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՆ»
ՈՊԽՏԸՆ-ԴՊՆ-1936

30 APR 2013




Գ. Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Ե Ա Ն

ՆԱԽԱԲԱՆ

Ազով-Սեվծովյան Յերկրամասսի հայկական դպրոցների 1935—36
ուս. տարվա ստուգողական թելագրությունների անալիզը ցույց տվեց
վոր աշակերտների գրագիտությունը գտնվում և ցածր մակարդակի
վրա: Այդ՝ մասսամբ մայրենի լեզվի դասատունների վորոշ մասի լեզվա-
կան և մեթոդական տեսակետից անորակ լինելու, ապա լուսբաժին-
ների թույլ դեկավարության հետեւանք եւ:

Յերկրային Մանկավարժական լաբորատորիան, նպատակ ունենա-
լով ողնել լեզվի դասատուններին և մոբիլիզացիայի յենթարկել նրանց՝
հայտնաբերած բացերը վերացնելու համար, ժողովածույի մեջ տեղա-
փորում ե Դ. Սողոմոնյանի հոդվածն ստուգողական թելագրությունների
անալիզի արդյունքների մասին, վորապես ուսուցիչն իր աշխատան-
քից վերցրած կոնկրետ փաստերի հիման վրա անի վորոշ յեզրակա-
ցություններ և իրականացնի կուսակցության կենտրոնի առաջազրած
խնդիրը—աշակերտներին դարձնել լրիվ գրագետ թե՛ գրավոր և թե՛
բանագոր խոսքի տեսակետից: Արտատպման կարգով, վորոշ կրճատում-
ներով, ժողովածույի մեջ արվում են Դարիբյանի և Խուզոյանի հոդ-
վածները՝ տիպիկ սխալները վերացնելու և գրաճանաչության մեթո-
դիկայի վերաբերյալ ինչպես նաև Ա. Տեր-Հարությունյանի հոդվածը
վերջին խնդրի պարզաբանմանը նվիրված: Պետք ե նշել, վոր ներկա
ժողովածուն ծրագրված ժողովածուների սերիայից առաջինն ե: Ցան-
կալի յեր, վոր հետագա ժողովածուները լույս տեսնելին յերկրամասի
սեփական ուժերով և տային ղեկավարություն մեր աշխատանքի պայ-
մանների համաձայն:

Ուստի Մանկավարժական լաբորատորիան դիմում ե յերկրամասի
ուսուցչությանը՝ նախ չզլանալ անելու իր դիտողությունները ներկա
ժողովածույի վերաբերյալ, ապա իր հոդվածներով և ուսումնասիրու-
թյուններով ոժանդակել հետագա ժողովածուների և Յերկրային լուս-
բաժնի «Բյուլետենի» եջերում աշխատավորություն իր փորձը՝ դարձնելու
այն ուսուցչական լայն մասաների սեփականություն:



28805.60

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ 1935—36 ՈՒՍՏԱՐՎԱ ԺՆՎԱԿԱՆ
ԹԵԼԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԱԽԱԲԱՆ

Ընդհանրապես աշխատանքի հաշվառքը և վերլուծումը վերին աստի-
ճանի ուսանելի նյութ են տալիս հետագա աշխատանքները կանո-
նավորելու և թերությունները վերացնելու համար: Այդ տեսակետից
ել յերկրամասի լուսբաժնին կից Մանկավարժական լաբորատորիայի
ձեռնարկած գործը—հայկական դպրոցների քննական գրավորների
ուսումնասիրությունը — վողջունելի քայլ ե, և պիտի հօւսանք, վոր այդ
չպիտի սահմանափակվի այս աշխատանքով, քանի վոր կուսակցու-
թյան կենտրոնն իր 1932 թ. ոգոստ. 26-ի վորոշմամբ մեր առաջ գրել
ե մարտական խնդիր՝ աշակերտներին դարձնել կատարելապես գրա-
գետ թե՛ գրագոր և թե՛ բանվոր խոսքով: Առանց այնպիսի ուսումնա-
սիրության, ինչպիսին սենք հրապարակում ենք ներկա հոդվածով, այդ
խնդիրը ոժվար թե կարողանանք լուծել, մանավանդ, վոր կատարված
անալիզի արդյունքները մեզ այդ են ասում: Մեր կատարած անալիզը
ցույց ե տալիս, թե ինչ չափով կատարել ենք կուսակցության պա-
հանջը, ինչ թերություններ ունենք, ապա, զրա վրա հիմնվելով, պիտի
մտածենք, թե ինչպիս կազմակերպենք մեր աշխատանքը, վոր անգրա-
գիտությունը, իբրև դպրոցի արմատական թերություններից մեկը,
խսպա վերացնենք:

Դժբախտաբար հնարավոր չեղափ ուսումնասիրել յերկրամասի բոլոր
հայկական դպրոցները. մի քանիսն աշակերտական աշխատանքները
բոլորովին չեյին ուղարկել, մի քանիսն ել ուշացրին: Ուսումնասիր-
ված ե 13 դպրոց: Ուսումնասիրության յենթակա յեն յեղել IV, V, VII, X
դասարանները: Մակայն պետք ե ասել, վոր նույն դասարանների քա-
նակի համաչափության վերոշ սկզբունք պահպանելու հնարավորու-
թյուն չեղալ, վորովհետեւ դպրոցից մեկն ուղարկել եր բոլոր պահանջ-

ված դասարանների աշխատանքները, մյուսը՝ մեկը կամ յերկուսը, գուցե և ընտրովի, Հետևապես բոլոր դպրոցների նույնանուն դասարանների համեմատական լրիվ պատկերը ներկայացնելու կողմից մեր աշխատանքն, իհարկե, ունի զգալի թերություններ, վոր հետազայռվ նման գործի անցնելիս, պետք են կստի ունենալ:

Սխալների տիպերը վորոշելիս առաջնորդվել ենք Դարիբյանի առաջարկած սկզբունքով, թեպետ վորոշ կետերում նրան համաձայն չենք, սակայն աշխատանքի անակնկարության և ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ վերամշակել այն և տալ նոր ձեւ:

Անցնենք բուն նյութին՝ սխալների անալիգին: Կաշխատենք հնարավորության չափով պարզ ներկայացնել մեր դպրոցների գրությունը դրագիտության աեսակետից, բացարել թերությունների պատճառները, սակայն առանց մեթոդական խնդիրների մանրամասնության մեջ մտնելու, վորովհնուե դա այս հոդվածի նպատակից դուրս են: Բայց և այնպես, կարեռ գեպքում, կհիշենք նաև մեր առաջարկությունները, իբրև միջոց այս կամ այն թերությունը վերացնելու համար:

Սխալները բաժանել ենք յերեք զլխավոր տիպի՝ հնչյունական (Փոնետիկ), պատմական (Լեզվաբանական) և քերականական (մորֆոլոգիական) իրենց ստորաբաժանումներով:

Ուսումնասիրության առարկա և յեղել նաև ձեռագրի խնդիրը. այդ մասին կխոսենք վերջում:

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԻՊԻ ՍԽԱԼՆԵՐ

Թանակի տեսակետից առաջին տեղը բռնում են հնչյունական տիպի սխալները, վորոնք կազմում են բոլոր տեսակի սխալների 64 տոկոսը: Այս տիպի սխալների շարքին պատկանում են՝ բաց թողած և ավելորդ գրած տառերը, տառերի տեղափոխություն, բարբառային, յերկնչյունի, աշակերտի լեզվի թերությունից բղխող և այլ նման սխալներ:

Այս շարքից աչքի յեն ընկնում բաց թողած տառերը, վոր IV դասարանների աշխատանքների մեջ կազմում են բոլոր սխալների $23^{\circ}/\circ$ Բաց են թողնում, ձնշող մեծամասնությամբ ($90^{\circ}/\circ$), վորոշող հոդը: Առաջին հայացքից թվում են, թե պետք են վորոշող հոդի ըմբռնում չունեցող բարբառի ազդեցություն լինի այդ, սակայն ն. Նախիջևանի յենթաբարբառում վորոշող հոդը լայն գործածություն ունի. գոյականի բոլոր հորմներն ել անխտիր ընդունում են այն: Յեթե այդպես են, ապա ուրեմն ավելորդ գրած տառերի մեջ գերակառող պետք են լիներ վորոշող հոդը, սակայն այդպես ել չեն: Մնում են ասել, վոր բաց թողած տառերի մեծ տոկոսը բղխում են աշխատանքների անուշագիր վերաբերմունքից, վորն, իր հերթին, նման սխալների թերապևտահատման հետևանք են ուսուցչի

կողմից: Շատերը, փոխանակ աշակերտի ուշադրությունն այդ խնդրին անենուուր, աչքաթող են անում այդ տեսակի սխալները, կամ աննկատելի ջնջելով՝ լրելյայն անցնում են, առանց զրա մասին խոսելու:

Ավելորդ գրում են, մեծ մասամբ, բառամիջում լսվող, բայց չգրվող ըստ տեղ մի վորոնե ձայնավոր: Որինակ՝ տիտր, մնալ, լսել, ննուում բառի մեջ բառասկզբի բաղաձայնից հետո ավելացնում են ու, ա, ե, ի ձայնավորները. սակայ գեպքում միայն ավելորդ վորոշող հոդ են գնում (Ե. IV, Զ. 3. IV, Խ.-Հ. VII, Զ. 4. VII)*:

Թեև շատ քիչ, բայց և այնպիս պատահում են տառերի տեղափոխություն. այդ յերկույթը, մեծ մասամբ, կապված է յերկնչյունների պարզման հետ, վորը հատուկ են. Նախիջևանի յենթաբարբառին. ինչպիս՝

հայր — հար	յեղբայր — ախար
մայր — մար	ծայր — ձաք

Այսպիսի բառերի մեջ ու կ տառերի տեղափոխություն են անում աշակերտները, մեծ մասամբ, այն ժամանակ, յերբ պարզված յերկնչյունով բառերն ընդունում են վորոշող հոդ, կամ անծանցվում են. ինչպիս՝ հարյր, մարյր, յեղբայրական

փոխանակ՝

հայրը, մայրը, յեղբայրական

Այստեղից պարզ են, վոր ուսուցիչը պետք են բացություն աշակերտները, մեծ մասամբ, այն ժամանակ, յերբ պարզված յերկնչյունով հոդի գործածության նկատմամբ:

Տեղափոխություն լինում են նաև կրկնակ բաղաձայնների (աֆֆրակատե) միջև: Զիջեցին բառի մեջ տեղափոխում են չ և ց տառերը (Խ.-Հ. VII). դա սուլիչ և շշական բաղաձայնների փոխադարձ ազդեցության հետևանք են միևնույն բառի սահմաններում:

Մի շարք հնչյունական սխալներ բղխում են աշակերտի լեզվական թերությունից, թեպետ գրանց տոկոսն այնքան ել մեծ չեն ($1,3\%$), այնուամենայնիվ աչքաթող անել չի լինի: Կան աշակերտներ, վորոնք չեն կարողանում արտասանել բաղաձայնը, այլ զրա փոխարեն արտասանում են ։ Նկատված են, վոր Մյասնիկյան ույունի Զալթը գյուղի կանանց զգալի մասը կտրել, կտրել, ապրել, վարպետ, բարերը բառերն արտասանում են գայել, գոյել, արյել, վայրեղ, բայելը (պատճառը բացարել դժվար են. զուցե Զեյթունի և Հաջինի բարբառ-

* Փակագծերում բերված կրնատ զրությունները դպրոցների անուններն են, վորոնցից որինակ են բերվում. դրանց պայմանական կրնատամերի ցուցակը տես հոդվածի վերջում:

ների ազդեցության մնացորդ ե), ինչպես յերկում ե, յերեխաներն ել փոքր հասակից ազդվում են հասակավորներից: Ինչպես ել վոր բացատրենք, սակայն փաստը մնում ե փաստ, վոր քելադրության, ուրիշ, հարեվլան, հարուս, բարկանում, դարձալ բառերի մեջ և բաղաձայնի փոխարեն գրում են յ, և դա վորոշ աշակերտների համար պատահական յերկույթ չե, այլ առանձին սիստեմ: Զալթրի յերեք գվրոցներից ուղարկած չորրորդ գասարանների աշխատանքների մեջ նման սխալների թիվը հասնում ե 100-ի:

Եինում ե և հակառակը, վոր չեն կարողանում արտաքերել յ տառընայել, բայց, պայման, ծառային, պայծառ բառերի մեջ յ տառի փոխարեն գրում են ր (Զ. 1, 2, 3 IV):

Աշակերտի լեզվական թերություններն ուղղելու համար ամեն մի լեզվի դասատու պետք և վարժեցնի իր աշակերտներին հնչյունների արտաքերման գրական լեզվի սիստեմին, վորովհետև վոչ թե միայն ր, յ, այլ շատ անգամ ռ — ր, տ, դ առանքը չեն կարողանում արտաքերել. Հաճախ ել սուլող և շշական բաղաձայններն ես շփոթում են: Բացի դրանից, մի քանի զյուղեր խուլ պայթական բաղաձայնների ըմբռնում չունեն: Դրա մասին իր տեղում:

Հնչյունական տիպի սխալների մեջ ամենամեծ տեղը բռնում են բարբառային և բարբառային հնչյունական սիստեմի ազդեցության տակ կատարած սխալները (բոլոր դասարանների համար 22%): Բարբառային սխալներն են, վոր ամենամեծ չափով մնշող ազդեցություն ունեն մեր աշակերտների գրագիտության վրա:

Սակայն պիտի հայտնենք, վոր այս խնդիրը, դժբախտաբար ուսումնասիրված ե միայն Մյասնիկյան ուսունի նկատմամբ, իսկ Տուալսեյի, Հայկական ուսունի և այլ տեղերի աշակերտական աշխատանքներն այդ ուղղությամբ չեն քննվել վորովհետև մեզ հայտնի չե, թե հայերենի բարբառների վեր ճյուղին ե պատկանում այնտեղի բնակչության խոսակցական լեզուն. հակառակ գեպքում բարբառային սխալների տոկոսն ավելի մեծ պիտի լիներ, քան մենք ենք ցույց տալիս:

Բարբառային սխալների առաջանալու պատճառը բարբառի և գրական լեզվի մեջ յեղած, գլխավորապես, հնչյունական և մասամբ ձևաբանական տարբերություններն են: Բանի վոր մեր նկատմած բարբառային սխալները վերաբերում են ն. Նախիջնանի յենթաբարբառին ուստի և տեսնենք, թե ինչպես ե այդ բարբառն ազդում աշակերտների գրավոր և բանավոր խոսքի վրա:

Ն. Նախիջնանի յենթաբարբառի տարբերությունը գրականից հընչյունական տեսակետից բաղաձայնների (գլխավորապես պայթական) արտասանության մեջ ե: Պայթական բաղաձայնների արտասանությամբ

վոչ միայն, ընդհանուր առմամբ, այդ բարբառը տարբերվում ե գրականից, այլև առանձին գյուղեր ունեն իրենց հատուկ արտասանությունը: Այդ տեսակետից կարելի յել յերկու խմբի բաժանել. ա) Զալթր և Թուփտի զանազանում են պայթուցիկ բաղաձայնների յեռատիճանի արտասանություն՝ ձայնեղ, խուլ և թավ — գ — կ — ք, բ — պ — փ և այլն. բ) Մյուս գյուղերը և ն. Նախիջնանի բնիկ հայությունը տարբերում ե միայն յերկու աստիճան՝ ձայնեղ և թավ — բ — փ, գ — ք և այլն, խուլ պայթական բաղաձայնների ըմբռնում չունեն: Այդ պատճառով ել նրանք ուսւերեն խուլ բաղաձայններն արտասանում են իրեւ թավ. Ինչպես՝ ուսումնական բաղաձայնների ըմբռնում չունեցող մարդկանց (հայերենի մասին գեռ չասենք):

Հետևապես պայթական բաղաձայնների յերկաստիճանի հնչմունք ունեցող գյուղերը ձայնեղ բաղաձայնների համար կունենան յերկուական նշան (զույգ տառ):

Ինչպես՝

Չայնեղ	Թավ
բ. պ — ց	փ
գ. կ — շ	ք
դ. ս — օ	թ
զ. ն — ծ	չ
ձ. ծ — ծ	ց

Յեկ պատահական չե, վոր Մեծ-Սալայի ուսուցիչները 1928 թ. Մյասնիկյան ուսունի լուսբաժնում լեզվի դասավանդության շուրջը տեղի ունեցած խորհրդակցությանը, մեր գեկուցման առթիվ բացված մտքերի փոխանակության ժամանակ, առաջարկում եյին հայոց լեզվի այրութենից ջնջել խուլ պայթական բաղաձայնները նշանները, պատճառաբանելով, վոր համապատասխան հնչյուն չկա հայերենում, հետեապես և ձայնեղ բաղաձայնների համար կարիք չկա յերկուական նշան պահել: Յեթե սրան ավելացնենք նաև այն հանդամանքը, վոր մինչև 1928 թ. Մյասնիկյան ուսունի դպրոցներում սովորեցրել են ձայնեղ պայթականների նշաններն արտասանել իբրև խուլ և խուլերն՝ իրեւ ձայնեղ — ուսւերենի համեմատությամբ տ — ծ, դ — չ, պ — ն և այլն, և վոր այդ ձևի ուսուցումը գեռ ևս խսպառ արմատախիլ չի արված (այդ են ցույց տալիս աշակերտների աշխատանքները), այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի քառսային գրության մեջ են աշակերտների ուղղագրական ունակությունները Մյասնիկյան

սայոնում: Վոչ միայն պայթուցիկ բաղաձայնների արտաքերության, այլև կ գրաճանաչության ուսուցման մեջ միորինակություն չկա. առկերտները չեն կարողանուած արտասահնությամբ տարբերել, թե վորն եղաւ ու գուշակ չեղաւ:

Այս հարցի վրա դիտմամբ ծանրացանք, վոր — նախամեր ներքեսում բերած որինակները հասկանալի լինեն, յերկրորդ՝ վոր ամեն մի ուսուցիչ մեր ասածներից վորոշ յեզրակացություն անի և առանձին ուշադրության առարկա դարձնի բարբառային սխալները, վորովինետև ուղղագրական ամենամեծ դժվարությունները բղխում են վերոհիշյալ հանգամանքներից:

Բարբառային սխալները կարելի յե բաժանել յերեք խմբի. ա) զուտ բարբառային, յերբ նույն բառը կա և՛ գրականում և՛ բարբառում, բայց վերջինում ունի հատուկ բարբառային արտասահնություն. բ) պայթուցիկ բաղաձայնների յերկատիճանի արտաքերությունից բղխող սխալներ. գ) պայթուցիկ բաղաձայն տառերի սխալ ուսուցման հետևանքով կատարած սխալներ:

ա) Զուտ բարբառային սխալների կարգին կարելի յե դասել գնալ, կարճ, պամել, կտրել, դրած, տարի, տեսնել, ծեծում, պատճառով, տոն, կարգ, կտրել, դրած, տարի, դեռևս, կատարած, բառերի կնալ, գարզ, բանել, դրած, տարի, դեռևս, ծել, ձեռում, բաղառով, դոն, դունը, ինվոնը գրությունը (Շ., Խ.-Հ., Զ. 1, Զ. 2, Զ. 3, թ. 5 դպրոցների IV դասարանները):

Այս որինակները ցույց են տալիս, վոր աշակերտները տառերի հնչական անունները ճիշտ են իմանում, բայց բարբառային արտասահնության ազդեցության տակ սխալ են գրում, ինչպես վոր այդ բառերն արտասահնում են բարբառում:

բ) Այն գյուղերը, վորոնք ունեն պայթուցիկ բաղաձայնների յերկատիճանի արտաքերություն, աշակերտներն անում են հետևյալ բնույթու սխալները.

դ. ս. — դնում — սնում

տեղը — դեղը

դեպում — տեպում

կ. գ. — կապում — զապում

զող — կող

գտնվում — կտնվում

զալու — կալու

ձ. ձ. — ձայները — ծայները

(Ս.Ս., Մ.Մ.) V.

Խուլ բաղաձայնի ըմբոնում չունենալու պատճառով առաջին և յերկրորդ շարքի բառերի բոլոր ոկզրնատառերն արտասահնում են իրեր ձայնեղ. աշակերտն ել իր լեզվական բնտղով գրում ե

գապում կարդում ե շաբախ
կալու » շալու

վորովինետև նրա համար գ ե կ տառերը միևնույն հնչյունն ունեն: Նկատված ե, վոր աշակերտը գույցի նշան ունեցող պայթուցիկներից (!) գերադասում ե խուլերի տառերն իրեր ձայնեղ դրելու (պ, կ...), վորովինետև այդ տառերը մինչև 1928 թ. սովորեցրել են իրեր հաստատուն ձայնեղներ. իսկ ձայնեղների նշաններն (բ, գ...) այնքան ել հաստատուն հնչյուն չունեն բարբառում. կան զեպքեր, յերբ նրանք արտասահնում են իրեր թափ բարի — փարի, գիրք — քրիք, գրիչ — քրիչ, բայց գարի արտասահնում ե ձայնեղ գոռվ:

Խուլ պայթուցիկների նշաններն իրեր ձայնեղ գրելու գերադասության հետաքրքիր որինակ կարող ե ծառայել այն, վոր աշակերտն իր ազգանունը փոխանակ Խարաբաջախան (թուրք. բաջակ — բաջաղի):

Այս հարցն ավելի խառնաշփոթ դրաւթյուն մեջ ե նոսասովի հայկական գլուխներում, մանականդ Խ.-Հ անվան միջնակարգ դպրոցում, գորտեղ կան Թբիլիսու (Թիֆլիսի), Ղարաբաղի, Մարաղայի, Վանի, Ն. Նախիջևանի, Ե. Բայազետի և այլ բարբառների ներկայացուցիչներ:

Վերոհիշյալ բայց վերացնելու համար պետք ե աշակերտներին վարժեցնել պայթուցիկ բաղաձայնների յեռաստիճանի արտաքերման: Բայց դրանից, պետք ե վարժեցնել բառերի գրական արտասահնության, վորի համար պետք ե բառամկզբի բաղաձայններն արտասահնել տալ ճիշտ համեմատ, իսկ բառամիջի բաղաձայնների համար կարելի յե գրականի համեմատ, զակարգացնել «Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները» գրքում բերված որինակներով (յերես 21 — 30), սակայն յերեք թույլ չտալ արտասահնել մատք, առծար, առծիվ, վորը խորթ ե գրականին, չտալ արտասահնել մատք, առծար, առծիվ, վորը խորթ ե գրականին, բայց Ղարիբյանն ընդունում ե իրեր նորմալ յերեսություն: Յերեկի նրան հետեւով ե, վոր մի քանին արտասահնում են ընկերը, հանհառը, շեռ կառող, և նույնիսկ ուսուցիչներից մեկը I գասարանի աշակերտի տետրակում զրել ե. «Նորից առտադրիլ», իսկ նրա աշակերտները արտագրություն բառն ամեն անու գրում են առագրություն (Սաղովայտարակ. դպրոց. — Հայկ. ուայոն):

գ) Յերրորդ տեսակի բարբառային սխալներն առաջանում են պայթուցիկ բաղաձայնների արտաքերման սիստեմից, յերբ բոլոր ձայնեղների նշաններն արտաքերում են խուլ և խուլերին ընդհակառակը — ձայնեղ:

դ. — մ
ս — օ
ձ — ձ լել ալին

Առաջ այդպիս ել սովորեցնում եյին Մյասնիկյան ռայոնի գպրոց ներում:

Բնորոշ յերկույթի ե, վոր 60 աշակերտից 44 հոգի հիվանդանալ բառը գրել են սխալ՝ հիվանդանալ, այն ինչ այդ բառի արտասանությունը գրականում և բարբառում նույնն ե. բայց բառը սխալ ե գրված: Այդ բացատրվում է նրանով, վոր աշակերտները և բաղաժայնն արտաքերում են իրեւ ձայնեղ, հետևապես գրաճանաչությունը սովորել են հին սխալ ձևով, սխալ արտաքերումով (Զ. 2, IV): Նույն պատճառով ել անջնջելի և Պլեխանով բառերը գրել՝ են աննենելի, Բլեխանով, վորովհետ և արտաքերում ե ծայ, բ—ո (Զ. 1. VII):

Իսկ յեթե ուսուցիչը գրաճանաչությունը սովորեցրել ե գրականի հնչյունական սխանեմով, ապա աշակերտներն իրենց բարբառի արտասանության համաձայն գրում են ՏՐԱԾ, ԳԵՐԱԿՈՒՐ, ՏՈՒՐ, ՊԱՏՎԵց, ՓՈԽԱՆԱԿ ԴՐԱԾ, ԿԵՐԱԿՈՒՐ ԴՈՒՐ, ԲԱՍՎԵց ԳՐԵԼՈՒ (Թ. 5. IV): Այդ պատճառով ել 28 հոգուց 10-ը տնտեսան բառը գրել են ՊԱՆՈՒԱՅԻ, ՎՈՐՈՎՀԵՏ բարբառում այդպես և արտասանվում (Թ. 5. IV):

Նույն պատճառով ել 28 հոգուց

- | | | |
|-------------|------|----------|
| 10 գնալ | գրել | են կնալ |
| 14 բարկանալ | » | պարկանալ |
| 12 դնել | » | Տնել |

Նման որինակներ բազմաթիվ են. բավականանանք այսքանով:

Շատ անգամ կասկածելի մեթոդները մոլորեցնում են աշակերտներին: Փոխանակ աշակերտներին տառը ճիշտ հնչել տալու, ասում են կովի կ, նաննի ն, ձիու ձ և այլն: Այդ մեթոդը սերմանում է միայն անգրագիտություն, ուստի և անհապաղ պիտի վերանա:

Մեծ տոկոս (14%): Են կազմում սխալ գրված այն բառերը, վորոնց գրությունը դպրոցական քերականական կանոններին չի յենթարկվում: Այդպիսի բառերն ուղիղ գրել պիտի սովորեն վարժությամբ (մոտոր և տեսողական հիշողության զարգացմամբ): Այս շաբթի սխալներից կարելի յե հիշել ծածկվել, գործ, ածել, աշխատել, մաղլցել բառերի ցածկվել, կործ, տցել, աշխաղել, մակլցել գրությունը (Շ. 1. IV, Խ. ~ Հ. 1. IV, Զ. 1. VI, Տ. 4. IV, Ս.-Ս. V): Նման սխալների վերացման համար մեծ դեր կարող է կատարել աշակերտների արտասանության կանոնավորումը գրականի համեմատ:

Ենքնում բերված աղյուսակը պարզ ցույց է տալիս, վոր հնչյունական տիպի սխալների մեջ ուժեղ կերպով աշքի յեն զարնում բարբառային սխալները (8-րդ և 9-րդ սյունյակները), վորոնց բարձր տոկոսը պահպանվում է բոլոր դասարաններում ել, նույնիսկ X դասարանը գերծ չե այդ սխալներից (22%):

Դասարան	Բոլոր սխալների ընդունակը	Հ Ն Հ Հ Ո ւ Ն Ա Կ Ո Ա Ն Ա Է Լ Ա Ն Կ Ր										
		Բաց բողած տառը	Ավելացնելու դրամը	Ավելացնելու դրամը	Տակարգությունը							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11		
IV	3670	22	4	0,3	7	8	14	14	0,1	2		
V	1405	9	5	0,3	8	22	14	11	1	1		
VII	1169	4	3	1	3	15	18	3	0,1	—		
X	36	6	—	—	3	6	22	—	—	—		

Ցանքածական: — Բացի 2-րդ սյունյակից մյուս բոլոր սյունյակների թվերը ցույց են տալիս տոկոսը: Տեքստում մեջ բերված և սույն այլուստակի տոկոսների առարկերությունները համապատասխան կետերում պետք է բացարկել այն բանը, վոր այստեղ ընդհանուր աղյուսակից քաղված են միայն բարբառային տեսակետից ուսումնասիրված գպրոցների տվյալները:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԻՐԻ ՍԽԱԼՆԵՐ

Պատմական տիպի սխալ պարունակող բառերի արտասանությունը չի համապատասխանում նրանց գրությանը: Ուսումնասիրված աշխատանքների մեջ այս տեսակի սխալները շատ չեն, բնդամենը 6 0/0: Ամենից շատ շփոթում են և և նայ հնչյունները: Սակայն պիտի նկատենք, վոր Մյասնիկյան ռայոնի դպրոցներն ազատ են այդպիսի սխալներից. դա բացարձում ե բարբառին հատուկ ո և բ տառերի վորոց և մաքուր արտասանությամբ:

Ո և բ հաճախ շփոթում են Շահումյանի անվան, Խ. Հայաստանի անվան, Տուապսեյի և Ցելիկավետպուկի դպրոցների աշակերտները:

Փոխանակ մարդ, ձարակից, զարմ անաւմ, տարորինակ, հարբեյին գրում են մարդ, ձուակից, զարմանաւմ, դառարինակ, հառբեյին:

Պատմական տիպի սխալներից հաճախակի պատահում են հետեւյալ աղյուսակում բերվածները.

Զ—Զ

- | | |
|----------------|----------|
| Փախանակ գրելու | մեջ |
| առաջ | առաջ |
| վերջացել | վերջացել |
| բրջված | բրջված |

գրում են՝
մեջ
առաջ
վերջացել
բրջված
(Խ. Հ. VI, Զ. 1. IV, Զ. VII, 2. VI)

Դ—Բ

մարդկային
կենդանի
արդեն

մարդկային
կենդանի
արքեն

(Տ. IV, Ե. V, Խ.-Հ, VII)

Գ—Բ

տնօտամ
յերգ
կարգ
զորգ

տնօտամ
յերգ
կարգ
զորգ

(Զ. 1. IV, Ե. V, Խ.-Հ, VII, Ա. X)

Զ—Ց

դարձավ
Համբարձում
փորձում
բարձր

դարձավ
Համբարցում
փորցում
բարցր

(Զ. 1. IV, Զ. 2. IV Խ.-Հ, Յելիզ. V)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԻՌԻ ՍԻԱԼՆԵՐ

Այս տիպի սխալները կազմում են 22%։ Այստեղ աչքի յե ընկնուժ ոժանդակ բայերի սխալ՝ կից գրությունը դերբայի կամ նախորդ ոյլ բառի հետ։ Դժբախտությունը կրկնակի յե լինում, յերբ նույնիսկ միավանկ բառերը ոժանդակ բայի ոգնությամբ տողադրձում են. ինչպես՝ պետք է, լավին (Խ.-Հ. IV, Զ. 2. IV)։

Այս տեսակի սխալները վերացնելու համար պետք է նախ՝ բացատրել ոժանդակ բայի գրության կանոնը, յերկրորդ՝ որինակներով ցույց տալ, վոր ոժանդակ բայի կից գրությունը խեղաթյուրում են խոսքի իմաստը, ինչպես՝

փակ ելին—հարակատար տնօտ. (բաղ. Ա. Տ.)

փակելին—ըդական անցյալ

մարդ եր—բաղադրյալ ստորագյալ

մարդեր—արևիմտահայ հոգնակի ձեվ

(Ա. X, Խ.-Հ, X)

Եփոթում են նաև հարակատար դերբայի ած վերջավորությունը առևմտահան անցյալ կատարյալի այց վերջավորության հետ։

փոխառնակ գրելու

գրաւմ են

կանգնած
ասած
արած
նսած

կանգնաց
ասաց
արաց
նսաց

(Խ.-Հ, VII, Ե. IV, Յել. V)

Քիչ չեն նաև մեծատառի սխալներ (4,5%): Դրանք մեծ մասամբ անուշադրության և նման սխալների թերագնահատման հետևանք են: Աշակերտները մի առանձին նշանակություն չեն տալիս մեծատառին. իսկ սևագիր աշխատանքների մեջ մեծատառ հն ընդհանրապես չեն գործածում, պատճառաբանելով, վոր սևագրությունն եւ: Աշակերտներից մի քանիսը սիրում են գործածել վորորապտույտ տառեր, ուստի և տեղի-անտեղի, նույնիսկ բառամիջում, մեծատառ են գործածում:

Հակառակ մեր սպասածին, տողադրձի սխալների տոկոսը շատ փոքր ե—2%: Սակայն յերբ իմուսու յենք քննում հարցը, պարզվում ե, վոր շատերը խուսափում են տողադրձից և տողը կիսատ են թողնում, կամ անցնում են լուսանցքի զիծը. հաճախ ել ձեռագիրը մանրացնում են, վոր բառը տեղափորեն տողում: Խոսք չկա, վոր սրա պատճառը տողադրձի կանոնը չիմանալն ե, կամ համապատասխան ունակությունն են բացակայությունն ե:

Քերականական սխալների կարգին պետք է դասել նաև բարբառային անհնչյունափոխ հոլովումը, ինչպես՝

մարմին — մարմինի
միս — միսի, միսով

(Խ.-Հ. IV, Թ. 5, IV)

Հաճախ չեն պահպանում յ կիսաձայնի գործածության կանոնը

ուղիղ	սխալ
միայն	միյայն
միտսին	միյասին
նիացմունի	նիյացմունի
ձիեր	ձիյեր

(Խ.-Հ. IV, Թ. 5, IV, Զ. 1. V)

Բառակազմության մեջ մեծ մասամբ վերջածանցների սխալ են անում —

իկ — գեղեցիկ ուղիղ ձեկը՝ գեղեցիկ
անֆ — գրգանի գրկանի
ածֆ — փորվածի փորվածի

սրգ — նետնորբ ուղիղ ձեզ՝ նետնորդ
ուրդ — խորհուրդ

(Շ. IV, Տ. 4. IV, Ա.-Ա. V, Խ.-Հ. V, Տ. 4. VII)

Բառերի բարդության բնորոշ սխալներ անում են դասընկեր, գործունեյուրյան և նման բառերի մեջ բաց են թողնում բարդվող բառերից յերկրորդի սկզբնատառը և դրում դասնկեր, զարծնելուրյան (Զ. 2. IV, Զ. I. VII): Պարզ ե, վոր բարդության կանոնը և գեղքերը աշակերտ պիտի իմանա, բառաւակը ը տառը պետք ե տարբերել բառամիջում լսվող, բայց չգրվող բայց:

ԶԵՐԱԳԻՐ

Վատ ձեռագիրն ընդհանուր յերեսույթ ե բոլոր դպրոցների և բոլոր դասարանների համար: Աշակերտների 90% գրում ե միտակ անջատ, իսկ 66% չի պահպանում տառերի համեմատական մեծությունը և համաշափությունը, 30% չի պահպանում ձեռագիրի ուղղության միուրինակություն, գրում ե խառն՝ միւնույն աշխատանքի, նույնիսկ միւնույն բառի մեջ մեկ աջ, մեկ ձախ թեքված, կամ ուղղահայտ: 42% գրում ե գեղի աջ թեքված, բայց տառերի համաշափություն չի պահպանում:

654 աշակերտներից վոչ մեկի ձեռագիրը չի բավարրում գեղագրության պահանջներին: Մյասնիկյան ույսոնի բոլոր դպրոցները, Խոյթայի որինակելի դպրոցը և Խ.-Հայաստ. անվան դպրոցը (IV և V) գործածում են, բացառապես, միտակ անջատ գրություն: Պարզ ե, վոր այստեղ արագագրության մասին խոսք լինել չի կարող: Կապակցված գրություն նկատվում ե Շահումյանի անվան դպրոցի IV, V, Խ.-Հայաստ. անվան դպրոցի VII, X և Արմավիրի դպրոցի X դասարաններում, այն ել վոչ իբրև սիմտեմ:

Ընդհանրապես տառերի մեծությունը և ձեռագրի չափը բավարարում ե համապատասխան դասարանների պահանջներին. միայն Զալթրի № 2 դպրոցի IV դասարանի աշակերտների 18% շատ մանր և խիտ ե գրում, վորպիսի ձեռագրը չի կարելի հանձնարարել կիրառել նույնիսկ X դասարանին:

Այսուամենայնիվ, յեթե արագագրության պահանջ չդնենք և առաջնորդվենք միայն ձեռագրի պարզությամբ ու համաշափությամբ, կտեսնենք, վոր կան դպրոցներ, վորտեղ կարելի յե գտնել գեղեցիկ ձեռագիր: Այդ տեսակետից առաջին տեղը բռնում են Զալթրի № 1 միջնակարգ դպրոցի V, VII դասարանները. զգացվում ե, վոր ուսուցիչը մեծ ջանք է թափել, թեպետ միտակ անջատ գրությամբ, այնուամենայնիվ սովորեցրել ե գրել պարզ, համաշափ և գեղեցիկ: Աշակերտներից շա-

տերը յուրացը ել հն ուսուցչի ձեռագրի վոճը: Զալթրի մյուս գպրոցների IV դասարանների 118 աշակերտներից վոչ մեկը տանելի չափով գեղեցիկ ձեռագիր չունի: Վորոշ չափով գեղեցիկ ե Տուապսեյի № 4 դպրոցի VII և Խ.-Հայաստանի անվան դպրոցի IV դասարանների աշակերտների ձեռագիրը:

Ընդհանուր պատկերը պարզ կացուցանելու համար ասենք, վոր 654 աշակերտներից միայն 113 վորոշ չափով տանելի ձեռագիր ունեն (17%): Սա վերին աստիճանի անմիջամբար վիճակ ե, մանավանդ վոր այդ 17 տոկոսն ել պայմանական ընդունված լավ ձեռագրի քանակն ե ցույց տալիս: Մենք գիտենք, վոր ուղղագրական ունակությունների զարգացումը մեծ չափով կապված ե լավորակ ձեռագրի հետ, հետեապիս անհետաձգելի խնդիր ե գեղագրության ուսուցման կանոնագրության հարցի լուծումը: Պետք ե անհապաղ վերացնել այն խառնիճաղանձ քառուր, վորը գոյություն ունի մեր դպրոցների գեղագրության ուսուցման միջ: Ընդհանուրի համար պարտադիր գեղագրության կանոններ սահմանելը Խ.-Հայաստանի կուսականական գործն ե. իսկ մինչև այդ մենք առաջարկում ենք I և II դասարանների համար առ այժմ ղեկավարվել դասարգքերով: III դասարանից մացնել կից գրություն (միտակ կամ յերկտակ): Արգելել գեղի ձախ թեքված գրություն. խստիվ հետեւ, վոր աշակերտները պահպանեն ձեռագրի իրենց ընդունած թեքումը (ցանկալի յե գեղի գեղի աջ) և պահպանեն ամբողջ գրության ընթացքում մի ուղղություն, վոչ թե ցըիվ և վայրէվերո գրեն, պահպանեն հայերեն տառերի ընդունված պատկերը: Հատկապես հետեւ մեծատառերի ձերին, վոր չշփոթեն փոքրատառերի հետ: Աշակերտների աշխատանքը գնահատելիս առաջնորդվել նաև ձեռագրի վորակով (բոլոր դասարանների համար ել անխստիր):

ՃԵՐՁԱՐԱՆ

Քննական թելազրությունների անալիզը ցույց տվեց, վոր գրագիտության տեսակետից առաջին տեղը բռնում ե Խոյթայի որինակելի դպրոցի IV դասարանը (ուղղագրակ. սխալներ 2%), իսկ ամենահետին տեղը՝ Զալթրի № 2 դպրոցի IV դասարանը (ուղղագրակ. սխալ 16,5%): V դասարաններից առաջինը Ս.-Սալայի դպրոցի V դասարանն ե, հետինը՝ Խ.-Հայաստանի անվան դպրոցի V դասարանը: VII դասարաններից առաջինը Ս.-Սալայի դպրոցին ե և X.-ներից առաջին տեղը բռնում ե Խ.-Հայաստ. անվան դպրոցի X դասարանը:

Իսկ յեթե մոտենանք Լուսմողկոմատի առաջարած պահանջի համաձայն, այն ժամանակ միջին գնահատականը յերկրամատի մասշտաբով վոչ մի դասարանի համար «միջակ» չի ստացվի. այդ պարզ յերեսում ե հետեւյալ համեմատությունից:

Դասաբան	Բոլոր նույնանուն դասաբանների սխալների միջ. % Ցերկարամասի մասշտաբով	Լուսժողկոմասի պահանջման միջակ գնահատականների համար
IV	14,7 %	6,6 %
V	6,1 %	5, %
VII	8,7 %	4, %
X	4,7 %	2,6 %

Այստեղից պարզ յերևում ե, վոր մենք դեռ ևս շատ անելիքներ ունենք զբաղիտության բարձրացման համար:

Ուսուցիչներից մի քանիսը ծանոթ չեն Լուսժողկոմասի պահանջներին և 7 տառասխալի համար նշանակում են գերազանց, 12 տառասխալի համար՝ լավ (IV դասարան), 13 տառասխալի համար՝ միջակ (V դաս.—Հայկական ուսյոնի Տուբա դյուդի դպրոց): Այդ յեղակի յերկույթ չե: Սրան պետք է ավելացնել նաև մի քանի ուսուցիչների անբարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը: Բավական է հիշել վոր Տուապսեյի դպրոցի VII դասարանի աշխատանքների մեջ յեղած 214 սխալներից 110-ը չեր ուղղված: Բազմաթիվ են այսպիսի դեպքեր և կարելի յե ասել ընդհանուր յերկույթ ե: Ավելի պարզ կինի դրությունը, յեթե ասենք, վոր սխալների ընդհանուր քանակից (7056) 644 սխալ այսինքն 9%-ը ուղղել ենք մենք:

Ծեր ձեռքում յեղած մի քանի փաստեր մեզ հայոցում են, վոր կադրերի հարցը վորոշ տեղերում անմիշթար վիճակի մեջ և գրագիտության անսակետից:

ԵԵԳՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ուղղագրական ունակությունների խնդիրը, չնայած մի քանի հաջողությունների, չի կարելի լուծված համարել. հետևապես և կուսակցության 1932 թ. ողուստ. 25-ի վորոշան համապատասխան կետը լեզվի ուսուցման մասին մեզ համար առ այժմ մնում ե իբրև մարտական կարգով կատարելու խնդիր:
 2. Շատ վատ դրության մեջ ե ձեռագույն կանոնավորման հարցը:
 3. Բարբառի ազդեցությունն աշակերտների բանավոր և գրավոր խոսքի վրա գեն ևս շատ ուժեղ ե:
 4. Գրագիտության ուսուցման նկատմամբ միորինակության կատարյալ բացակայություն:
 5. Մեծ կարիք կա կադրերի մի մասի մերապատրաստման:

ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ԹԱՐՅԱԿ

1. Դպրոցներն ապահովել դասագրքերով, ծրագիրներով և ուղարկական բառարաններով:

2. Տեղերում կազմակերպել հայոց լեզվի ուսումնասիրության խմբակներ ուսուցիչների համար:

3. Ամեն մի առարկայի ուսուցիչ պետք է լրիվ կերպով զգացնել աշակերտներին դաստիրքը, վոր աշակերտներն ընտելանան այդ առարկայի լեզվի վոճին և յուրացնեն համապատասխան տերմինոլոգիան:

4. Դպրոցներում չգործադրել բարբառը: Զընդունել բարբառով գրավոր ու բանվոր պատասխաններ աշակերտաներից:

5. Մացնել միորինակություն գրագիտության ուսուցման մեջ. հատկապես ուշադրություն դարձնել պայթուցիկ բաղաձայնների յեռաստիճանի արտաքրությանը գրականի համեմատ:

6. Զեռագլի կանոնավորման խնդիրը դարձնել դպրոցում ամենաշարժությունը հարցերից մեկը:

7. Կանոնավորել աշակերտների արտադասարանական լրացուցիչ ընթերցանությունը և ղեկավարել այն:

8. Աշակերտներին վարժեցնել ինքնուրույն կազմել ուղղագրական բառարաններ, իրենց սխալ դրած բառերը հաշվի առնելու համար:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

- | | |
|-----------------|--|
| Ե | Թոստովի, Շահուռժանի անվան միջնակարգ դպրոց. |
| Խ.-Հ | Թոստովի, Խորհրդ. Հայաստանի անվան միջնակ. դպրոց. |
| Զ. 1. | Չալթը, № 1 միջնակարգ դպրոց. |
| Զ. 2. | » № 2 վոչ լրիվ միջն. դպրոց. |
| Զ. 3. | » № 3 » » » » |
| Թ. 5. | Թոփտի № 5 » » » » |
| Մ.-Մ. | Մեծ-Մալա, » » » » |
| Ս.-Ս. | Սուլթան-Մալա, » » » » |
| Տ. 4. | Տուապսի, վոչ լրիվ միջն. դպրոց. |
| Ց. 4. IV | Ցեղզովետպուսկի տարրական դպրոց. |
| Ց. 4. V | » վոչ լրիվ միջն. դպրոց. |
| Խ. | Խոյթալ դպրոց (Հայկական ռայոն). |
| Ա. | Արբավիրի միջնակարգ դպրոց. |

Դպրոցների կրնաւ անունները դրված են բերված որինակներից հետո վակագներում, իսկ դրանց հետ գրձածքով հռոմեյական թվանշանները ցույց են տալիս դասարաններուն:



ՍԽԱԼՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Հնչյունական տիպի սխալները վերացնելու համար (բացի պահապավության դեպքից), անհրաժեշտ ե աշակերտի մեջ ստեղծել խոսքի բոլոր կենտրոնների համակցության ունակություն։ Այդ ունակությունը կստեղծվի այն ժամանակի, յերբ աշակերտը հաճախ տեսնի գրածը, հաճախ գրի, հաճախ լսի և հաճախ արտասանի։ Դրանցից ավելի անհրաժեշտն ու կարևորն այն ե, զոր աշակերտը լսածն ել գրի նույն արագությամբ, ինչ արագությամբ դրում ե տեսածը կամ արտասանածը։ Դրա համար պետք ե զուգակցել զրավոր աշխատանքները, արտագրությունը փոխարինելով շարագրությամբ, վերջինս ել թելադրությամբ և կամ ընդհակառակն։ Այս ընդհանուր մոտեցումից դուրս՝ պետք ե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզել հնչյունական սխալի պատճառը և համապատասխան միջոցներ գործադրել։

Աշակերտի հոգնած ժամանակ զրավոր տալը չի հանձնարարվում։ Յեթե աշակերտը սխալ կատարում ե բառերի վերլուծությունն և համարդությունն կատարելու ունակությունն չունենալու հետևանքով, ապա անհրաժեշտ ե նրա մեջ զարգացնել այդ ունակություն նները։ Վնասակար չե, յերբ լեզվի դասերին, թեկուզ չորրորդ դասարանում, դասատուն աշակերտին ստիպում ե բառը վանկերի բաժանել և կամ պարզել, թե այս կամ այն վանկը ի՞նչ հնչյուններից ե բաղկացած։

Յեթե աշակերտն ընդհանրապես ցրված ե և զրա հետևանքով և կատարում սխալը, ապա պետք ե պարզել պատճառը և վերացնել այն։ Հնչյունական սխալները կարող են լինել պատահական, ուղղակի վրեպում, զորը յուրաքանչյուրի հետ կարող ե պատահել։ Բայց հնչյունական սխալները կարող են նաև հատուկ լինել աշակերտին։ Այդ դեպքում մոտեցումը պետք ե լինի անհատական։

Յըլած աշակերտին ուշագիր դարձնելու համար հարմար կլինի մյուսներից ավելի քիչ և հեշտ աշխատանք տալ։ Ինքնուրություն գրավոր աշխատանք կտարարելու վերջում (շարադրություն, տպափրությունների հաղորդում) հարմար կլինի, յիթե դասատուն աշակերտին հանձնարարի ուշագիր կարդալ իր գրածը և տեղն ու տեղը ցույց տա այն պահասկամ ավել գրած հնչյունները, զոր աշակերտը կատարել ե և չի նկատում։ Յեթե աշակերտի աչքը չսովորի բաց թողած կամ ավել գրած տառը նկատել հնչյունական սխալները կշարունակեն։

Յեթագրություն գրելիս դասատուն՝ պետք ե այդպիսի աշակերտին կրկնել տա թելագրածը։ Կրկնելու ժամանակ աշակերտը պետք ե բառը պարզ արտասանի, այնպես, զոր յուրաքանչյուր հնչյուն լսվի բառերի մեջ։ Այդ բավական չափով կնպաստի սխալները վերացնելու։ Յեթե հնարավորություն և առիթ կա, պետք ե հենց գրելու ժամանակ յերբեմն աշակերտի ուշագրությունը հրավիրել հնչյունական սխալով գրած բառի վրա և գրել տալ ճիշտը։

Այտագրություն հանձնարարելիս պետք ե քանակի յետեկց չընկնել։ պետք ե քիչ տալ և այդպիսի աշակերտների արտագրությանը հետևելու տեղնուտեղը գրքում կամ զրատախտակի վրա ցույց տալ այն բառի ճիշտ գրությունը, զորն արտադրելիս աշակերտը սխալ ե կատարել։

Յեթե հնչյունական սխալը կատարվել ե աշակերտի բարբառի աղղոցության տակ, որինակ՝ հայրուց, այրուն, ապա պետք ե աշակերտին մի քանի անգամ արտասանել տալ բառը, ցածր դասարաններում նույնիսկ խմբով արտասանել, ապա գրել տալ։

I և II դասարաններում հանձնարարելի յե արտագրության որինակը զրատախտակին գրելու ընթացքում նաև բարձր արտասանել։

Այդ դեպքում աշակերտը և տեսնում ե գրածը, և տեսնում ե ճեռքի շարժումները, և լսում ե բառի արտասանությունը։

Հնչյունական տիպի սխալների վերացման չի նպաստում մեքենայական արտագրությունը։ Արտագրվելիք հոգվածը կարելի յե սխալ կարդացող աշակերտներին նախորոք կարդալ տալ, ապա սկսել արտագրությունը։ Յեթե աշակերտի ըմբռնողական կարողությունից մեկը գոմինանտ ե, ասենք թե աշակերտը տեսողական տիպին ե պատկանում, այսինքն՝ հիշողության մեջ տեսածն ե լավ պահում, բայց լսածը չի պատկերում, չի կարողանում վերածել մոտորականի և ճիշտ գրել, ապա անհրաժեշտ ե վհէ թե զիջնել նրան, գնալ նրա կարողության ընթացքով, այսինքն՝ միայն արտագրել տալ կամ կարդալ տալ՝ գրելու համար, այլ նաև վարժեցնել լսելու և գրելու, ուրիշ կերպ ասած՝ զարգացնել նրա լսողական ըմբռնման ունակությունը։ Դրա համար նրան

հառկապես պիտի թելադրություններին մասնակից անել և, յեթե հնարագոր ե, առանձին թելադրության աշխատանքներ կազմակերպել նըսակ նրա նմանների հետ: Մյուս տիպերին պատկանողների հետ պիտք ե վարչել նույնանման յեղանակով. լողականին արտագրել տաէ անգիր վոտանավորներ գրել տալ և այլն:

Հնչունական տիպի սխալները վերացնելուն նպաստում ե նաև առանց շտապելու, հասկանալով և կանոնավոր առողջապահությամբ կարգալը: Ընթերցանության դասերին այդպիսի աշակերտների կարդալու վրա պիտք ե առանձնապես ուշադրություն դարձնել:

Ընդհանրապես շատ կարդալը նպաստում ե ուղղագրության գիտության:

2. —Պատմական տիպի սխալները շատ բնական են և բղխում են աշակերտների լսածը նույնությամբ գրավոր վերարտադրելու իմպուլսից:

Բայց պատմական տիպի սխալներ կատարվում են վոչ թե բոլոր բառերում: Այդ տիպի սխալներ յենթալը բառերի թիվը հայերենում շուրջ 3000 ե: Հայերենի այս տիպի սխալները հասկանալու և բացատրելու համար անհրաժեշտ ե իմանալ, վոր մեր հնչունական սխալները ունի վորոշ առանձնահատկություններ: Մեր գրական լեզվի մեջ գոյությունի բաղադայն հնչունների յեռաստիճանություն, վորոնցից առաջին աստիճանին պատկանողները կոչվում են ձայնեղ, յերկրորդին՝ խուլ, յերրորդին՝ օնչեղ խուլ կամ բավ:

Այսպես.

Ձայնեղ	Խուլ	Թափ կամ օնչեղ	Խուլ
բ	պ		փ
դ	ս		թ
ձ	ծ		ց
ջ	ճ		չ
դ	կ		է

Հետեւալ բաղաձայնները կազմում են յերկու աստիճան:

Ձայնեղ	Խուլ
բ, ր	—
դ	ի
ջ	ս
ժ	ց
դ	է

Յերկուսը կազմում են ոնդայինների խումբ՝ մ և ն. կան նաև կորդային բաղաձայն ի և միջնալեզվային բաղաձայն լուն: Այդ ամենից

գուրս ե և կողմային բաղաձայնը, վոր վոչ մեկի հետ չի կապվում և ուղղագրական սխալի աեղիք չի տալիս:

Արտասանության մեջ նկատվում են հետեւյալ տարբերությունները:

ա) որինաչափ կերպով յեռաստիճանի բաղաձայնների առաջին շարքը (ձայնեղ) արտասանության մեջ պատմական տիպի բառերում տեղի յեւ տալիս յերրորդ շարքին (խուլ շնչեղներին)*:

որինակ՝

Հարբել	արտասանվում	և հարփել	խարել	արտասանվում	և խափել
բուրդ	»	բուրդ	ոդ	»	ոք
խարբ	»	խուրց	ոն	»	ոց
վերջ	»	վերչ	աջ	»	աչ
կարգ	»	կարք	հոգի	»	հոքի

բ) մի շարք գեպերում, հատկապես և և մ ոնդայիններից հետո, յերկրորդ շարքի բաղաձայնները (խուլեր) վերածվում են ձայնեղների որինակ՝

ամպ արտասանվում և անբ

բանս	»	բանդ	
պանձալի	»	պանձալի	
նամն	»	նանց	խնճույք
ընկնել	»	ընկնել	և այն

գ) մի շարք բառերի մեջ յերրորդ շարքի բաղաձայնները (թավ կամ խուլ շնչեղ) արտասանվում են յերկրորդ շարքի բաղաձայնների նման (խուլ). որինակ՝

հաղթել	արտասանվում	և հախել
խոսի	»	խոսկ
պետք	»	պետկ

դ) յերկաստիճանի բաղաձայններից դ. վ ձայնեղները վերածվում են և Ֆ խուլերի որինակ՝

մաղթել	արտասանվում	և մախել
նավը	»	նաֆր
զգուց	»	սգուց

ե) այդ նույն յերկաստիճաններից բաղաձայնը առաջնալեզվային բաղաձայններից առաջ վերածվում են ու բաղաձայնի (ձայնեղ). որինակ՝

* Այժմ արդեն շատերը խոսակցական լեզվի մեջ պահպանում են ձայնեղ հնչյունները. որինակ՝ ասում են իշնել, զերջ և այլն, փոխանակ ասելու իշնել, զերջ և այլն:

արծար արտասանվում և առծար
մարդ » մառք
արտ » արտ և այլն:

զ) շիռթվում են նաև մ և ն ռնգայինները: Բոլոր շրթնայիններից
առաջ մ բաղաձայնը լսվում է վորպես ն. որինակ՝

բամբակ լսվում է բամբակ
ամպ » անբ
ամփոխել » անփոխել

Այդ կատարվում է այն պատճառով, վոր մ հնչյունի շրթնային
տարրը միաձուլվում է ք, պ, փ շրթնայինների հետ:

ը) շիռթվում են նաև ն և յ հնչյունները, յա և իա կապակցու-
թյունները, և և յե կապակցությունները.

թ) ն բաղաձայնը մի շարք բառերում բ-ից հետո չի արտասանվում
կամ շատ թույլ է արտասանվում:

աշխարհ լսվում է աշխար
խարհուրդ » խօրուրդ
նիրհ » նիր
տրհամարհել » տրհամարել
նախապարհ » նախապար
խոնարհ » խոնար
տնորհ » տնոր

Այդ նշանակում ե, թե մեր բոլոր բաղաձայնները, բացառությամբ
ժ, ո և լ բաղաձայնների, այս կամ այն գեղքում յերբեմն աարբեր են
արտասանվում, ուրեմն կարող են սխալների առիթ տալ ուստի բաղա-
ձայնների գրությունը խիստ բարդ աշխատանք ե պահանջում: Բաղա-
ձայնների ուղղագրության այդ բարդությունը հեշտանում է մի շարք
կանոններով, վորոնք թեև աշակերտին ըստ մեծի մասին մատչելի չեն,
բայց ուսուցիչն այդ պետք ե իմանա և այդ կողնի նրան ուսուցման
գործում: Տրագիֆին (պատճական) գրություն ունեն մեծ մասամբ թափ
(խուլ շնչեղ) արտասանվող ձայնեղների թափացման
(որինակ՝ դ-ի վերացումը թ-ի) գործում մեծ զեր են կատարում ք և դ
բաղաձայնները: Այդ բաղաձայններից հետո ձայնեղները սովորաբար
մի շարք բառերում թափ են արտասանվում: Այժմ բառապատկերի
ազդեցության տակ այդ յերկույթը վերանում ե և հետու չե այն որը,
յերբ մեր արտասանությունը կմոտենա գրությանը: Առայժմ դպրոցա-
կան կոչված արտասանությունը ընդունելով կանոնավոր, խոսենք մի
շարք գեղքերի մասին:

Յեռաշարք բաղաձայնների վերաբերյալ կան հետեյալ որինաչա-
փությունները:

ա) զ և չ

1. Պ բաղաձայնից հետո անհնչյունավորի բառարմատներում լսվում
է գրվում և չ դարչին չարչի, բառերում:

2. Պ բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունավորի բառարմատ-
ներում, յեթե լսվում է չ, գրվում է ջ. որինակ՝

անուրջ	կամուրջ
արջ	բրջել
արջառ	հորջորջել
արջասպ	մարջան
բաղարջ	մրջունի
լուրջ	լերջանիկ
խարջ	տուրջ
խուրջին	երջարեական
երջել	երջնի
երջմոլիկ	վերջ և այլն:
ստերջ (ամուլ, անպտուղ)	
վորջ (գաղանի բուն)	

3. Ղ բաղաձայնից հետո լսվում է գրվում և չ միայն զեղչել
բառի մեջ:

4. Ղ բաղաձայնից հետո, յեթե լսվում է չ, գրվում է ջ հնչյունա-
փոխության չենթարկված բոլոր բառարմատներում: որինակ՝

աղջամուղջ	աղջիկ
այծեղջուր	առողջ
գաղջ	գեղջուկ
զղջալ	յեղջուր
յեղջուր	եեղջ
չղջիկ	փողջ
փողջուն	վողջախոն և այլն:

б) ձ և ց

1. Պ բաղաձայնից հետո լսվում է և գրվում գ հնչյունափոխության
չենթարկված հետևյալ բառարմատներում: որինակ՝

արցունիք	
ապարաց (այս նշանը)	
հարց	
պախուց (սանձ)	

2. Պ բաղաձայնից հետո, յեթե լսվում է ց, գրվում է ձ մյուս
բոլոր անհնչյունափոխի բառարմատներում: որինակ՝

ամորձիք	արվարձան (առտակայք)	դարձվածք
անվերազարձ	բարձ	դերձակ
աշխատավարձ	բարձել	դերձան
արձագանք	բարձր	դիմադրանուրյուն
արձակ	բարձրաբերձ	ընդարձակ
արձակուրդ	բացարձանիկ	իրադարձուրյուն
արձան	բարձր	լորձունիք
արձանագրել	բարձայիլ	խուրձ

համարձակ	հետադարձ
հանդերձ	որակարձ
հանդերձարան	սահմարձակ
հանդերձայլ	վորձ
հերարձակ	վորձափառ
հերձված	վարձակալ
հորձանիք	վերամբարձ
հրձիք	վարձ
ձորձ (լաթ, հազուստ)	փորձ
մանկարաձ	փարձանիք
մերձավոր	փորձառու և այլն:

3. Պ բաղաձայնից հետո լսվում և գրվում ե զ հետեւյալ բառերում:
բաղց
բաղցիք (ռակ կոչվող հիվանդությունը)

4. Պ բաղաձայնից հետո, յերբ լսվում ե զ, գրվում ե ձ բոլոր անհնչյունափոխ բառարմատներում. որինակ՝

ատաղձ	մղձավանձ
գուղձ (հողի կոշտ)	շնչամիեղձ
դաղձ	ջրամիեղձ
լեղձանիկ	փղձիկ
բղձալ	հեղձամաղձաւիկ (խեղդող, չունչ կտրող)
իղձ	բաղձանիք
մաղձ	դեղձ և այլն:
մելամաղձոն	

Ը) դ և թ

1. Պ բաղաձայնից հետո լսվում և գրվում ե թ հետեւյալ անհնչյունափոխ բառարմատներում.

արբաւն	կիրք
նարք (տափակ)	կարք
խորք (անհարազատ)	քերք

բարիել	հերք
հորք (կովի ձագ)	մերք
մորիել	յերք (գնալ)
օղոգօրք	շարք (գուրս կորպել)
օւորք	պարիել
սաղարք	վարք (վազ)
ֆորիել	քրմնջալ
զիմարք	խրին
լաւրք (յերկնագույն)	փարքամ

2. Պ բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում, յեթե լսվում ե թ, գրվում ե դ. որինակ՝

մարդ	յերգում
բարդ	կարգալ
վարդ	նյարդ
բերդ	յերդ (յերդել)
լլարդ	յերդակից (և այլն):
զարդ	

3. Ն բաղաձայնից հետո լսվում ե թ, բայց գրվում ե դ հետևյալ բառերում:

կենդանի
անդամ
խնդիր

Այդպիս ե նաև ընդ նախածանցով կազմված բառերի վեջ. որինակ՝ ընդհանուրը, ընդունել, ընդորինակել և այլն:

Մյուս բոլոր բառերի մեջ գրվում ե թ, որինակ՝ կանքեղ, քնքրիք, ընքերցանուրյան և այլն:

4. Զայնավորից հետո լսվում ե թ, բայց գրվում ե դ մի քանի բառերի մեջ. որինակ՝ ող, վառդ, Աղամ, Թաղեսոս, Դադար:

Մյուս բոլոր բառերի մեջ գրվում ե թ, ինչպես թաթ, թութ, բութ և այլն:

Ը) թ և փ

1. Պ բաղաձայնից հետո լսվում և գրվում ե փ հետեւյալ անհնչյունափոխ բառարմատներում կամ իբրև արմատ գիտակցվող բառերում.

արփի (արկ)
յերփն (— երանդ)
տարփնիք
փրփօւր

2. Յ բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում, յեթե լսվում է փ, գրվում է ք, որինակ՝

արբանյակ	բորբ
արբեցողություն	բորբանել
արբունիք	բորբովել
արյունաբու	դարբին
իրբ	յերբեք
վօրբ	յերեսարբիչ
հարբել	(վոտքի տակի կողմը)
հարբախ	ներբող
ձերբակալել	նուրբ
յերբ	ներպարյան
յերբեմն	ուրբար

3. Դ բաղաձայնից հետո լսվում և գրվում է փ հետեւյալ բառերում.

հղիանալ
փողիողել

4. Պ բաղաձայնից հետո անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում, յեթե լսվում է փ, գրվում է ք.
աղբ յեղբայր արտասանվում է՝ յեխպայր
աղբյուր (արտասան, ե ախպյուր) վաղբ
աղբյուր վաղբեգություն և այլն.
բողբոջ

e) գ և f

1. Ց բաղաձայնից հետո գրվում և արտասանվում է գ հետեւյալ արմատներում և վորպես արմատ գիտակցվող բառերում.

արբան	բրիզ
կիրք	բրերել
հերենի	բուրբ
ներեւ (—ուստ, —ին, —եվ)	սարբ
բարբ	

2. Ց բաղաձայնից հետո, յեթե լսվում է ֆ, գրվում է գ մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում.

բարգման	յերգ
Սարգիս	կարգ
պարգև	արգելվ և այլն:

Յերկշարք բաղաձայններից՝ ո և ր, դ և լս կույգերի վերաբերյալ կան նույնպես որինաշափություններ։

գ) դ և խ

1. Անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում բաղաձայնից առաջ լսվում և գրվում է խ հետեւյալ բառերում.

ախս (ցավ, հիվանդություն)	վախճան
ապուխս	սխսար
բախս	նախօւն
զմրուխս	քուխս
յերախսիք	բախսպ
ժխսել	դրախս
պանդուխս	լախս
սախսակ	խրոխս
ուխս	դժոխս. և պաւխս վերջագործ հատուկ անուններում (որինակ՝ Հայկանգութեա, Խոսրովադուխտանակութան):

Նկատելի յե, վոր համարյա այդ բոլոր բառերը փոխ են առնված պարսկերենից,

2. Մ նացած բոլոր դեպքերում անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում բաղաձայնից առաջ, յեթե լսվում է խ, գրվում է դ:

աղբ	խեղիք
աղտ (կեղա)	ուղտ
աղբաս	վաղբ
բուղբ	մաղձ
մաղբել	դաղձ
աղբյուր	փողջ
նաղբել	շեղջ
շղիք	գեղձ և այլն:

հ) ո և ր

1. Անհնչյունափոխ բառարմատներում ն-ից առաջ լսվում և գրվում է միշտ ո.

դանեալ	օառնություն
բառնալ	ձեռնաւեկ
խառնել	փռներ
գառնուկ	բռնել
դոնակ	յեղեռնազոր (հանցագործ, չարագործ)
նոնակ	մօռնել և այլն:

2. Մյուս բաղաձայններից առաջ ո գրվում է միայն հետեւյալ բառերի մեջ.

ուռիան	կառչել (կպչել)
ուռչանալ	կորնել (հենվել)
ուռքի	կովան
խոպօս	մատովակ (գիրի տվող) և այլն:
առվայշ	

3. Մյուս բոլոր բաղաձայններից առաջ անհնչյունափոխ բառարմատներում, յեթե լսվում են, պետք են գրել բ. որինակ՝

արծար
արծիվ
արտ
մարդ
դարդ և այլն:

4. Ն-ից առաջ բ. կարող են գրվել միայն այն գեղքում, յերբ բառարմատի հնչյունափոխության հետևանքով նո-ի և ր-ի միջի ձայնավորը դուրս ենկնում:

գարուն — գարնանային
արյուն — արնաւաղախ
վերին — վերնատուր և այլն:

5. Ո-ն կարող են լնկնել բաղաձայնից առաջ, յեթե բառարմատի հնչյունափոխության հետևանքով գրանց միջի ձայնավորը դուրս ենկնում և կամ ո-ով վերջավորվող բառն ածանցվում կամ բարդվում են

առիք — առքիվ
պառիկ — պառիել
կորիվ — կովարար
փառք (արժատն ե՞ փառ)
կտոռք (արժատն ե՞ կտոռ)
առք (արժատն ե՞ առ) և այլն:

6. Ո-ով վերջավորվող արժատի կրկնությամբ կազմված բարդ բառի մեջ առաջին ո-ն դառնում են:

բարբառ
բրիռ
գրգիռ
մրմեռ և այլն:

7. Նմանաձայնությամբ կազմված բառերը գրվում են ո-ով:

մոմոալ
նոնալ
գոզգոռալ
դոդոալ և այլն:

8. Ոտարազգի բառերի սկզբում գրվում են:

ոնժիմ	մասով
ոնախզմ	ոնեա
ոնակիա	ոնեկա
ոումբ	մուսատան
ոնպրեսիա (ձնշում)	մումինակա և այլն:
ոոմանիզմ	

9. Բառամիջում գրում ենք բ. յերբ բառն ոտարազգի յե.

ոպորտունիաս	դիրեկցիա	բերիա
պրոլետար	ֆրանսիա	որինետցիա և այլն:
սերիա		

10. Ոտարազգի բառերի մեջ ո գրվում են և ն բաղաձայններից առաջ և կրկնառառ բ-ով վերջավորվող բառերի մեջ. որինակ՝

բեռլին	
ֆուրենալ	
Մառն (գետ Ֆրանսիայում)	
Մառ.	

g) մ և ն

1. Բոլոր շրջնային բաղաձայններից առաջ (բ, պ, փ) լսվում են և գրվում են. որինակ՝

բամբակ	
ամպ	
ամփոփել և այլն:	

2. Բ, պ և փ բաղաձայններից առաջ ն կպրի միայն ան նախածանցով կազմված բառերում. որինակ՝

անպեսք	ան-պեսք
անփույք	ան-փույք
անբերի	ան-բերի և այլն:

Այս կանոններից գուրս են մնում շուրջ 1000 բառ. Ուստի պետք է ընդունել, զոր պատմական տիպի սխալները վերացնելու համար ամենակարեվոր միջոցը կանխելու միջոցն են. Յեթե հնչյունական տիպի սխալների համար անհրաժեշտ եր մշակել աշակերտների խոսքի կենտրոնների ըմբռնումների մեջ համակցություն, բառն արագությամբ հնչյունների և վանկերի վերածելու և հնչյուններից բառեր համագրելու կարողություն, ապա այտուել անհրաժեշտ են նաև «վերածման» ունակություն, այսինքն՝ աշակերտը պետք են սխալ լսի և ճիշտ գրի,

Աւոկան կառչել (կպչել)
 ուռչանալ կորմել (հենվել)
 ուռքի կռվան
 խռպաս մատովակ (գիրի տվող) և այլն:
 առվալյան

3. Մյուս բոլոր բաղաձայններից առաջ անհնչյունափոխ բառարմատներում, յեթե լսվում է ո. պետք է գրել թ. որինակ՝

արծար
 արծիվ
 արտ
 մարդ
 դարդ և այլն:

4. Ն-ից առաջ թ կարող է գրվել միայն այն գեղքում, յերբ բառարմատի հնչյունափոխության հետևանքով ն-ի և թ-ի միջի ձայնավորը դուրս է ընկնում.

գարուն — գարնանային
 արյօնի — արնաւաղախ
 վերին — վերնատուր և այլն,

5. Ո-ն կարողե ընկնել բաղաձայնից առաջ, յեթե բառարմատի հընչյունափոխության հետևանքով գրանց միջի ձայնավորը դուրս է ընկնում և կամ ո-ով վերջավորվող բառն ածանցվում կամ բարդվում ե

առիր — առքիվ
 պառփի — պառփել
 կոփի — կոփարա
 փառք (արմատն ե՝ փառ)
 կտոռ (արմատն ե՝ կտոռ)
 առք (արմատն ե՝ առք) և այլն:

6. Ո-ով վերջավորվող արմատի կրկնությամբ կազմված բարդ բառի մեջ առաջին ո-ն դառնում է թ.

բարբառ
 բրիռ
 գրգիռ
 մրմթուր և այլն:

7. Նմանաձայնությամբ կազմված բառերը գրվում են ո-ով.

մոմեալ
 նոճոալ
 գոռգոռալ
 դրդոալ և այլն:

8. Ոտարազգի բառերի սկզբում գրվում է ո.

ոեժիմ մասով
 ոեալիզմ ոենտա
 ոեակցիա ոենեցաս
 ոումբ մուոասան
 ոեպրեսիա (ձնշում) մումինիա և այլն:
 ոումանտիզմ

9. Բառամիջում գրում ենք թ, յերբ բառն ոտարազգի յե.

ոպորտունիա դիրեկցիա բեռրիա
 ալրոլեար ֆրանսիա որիենտացիա և այլն:
 սերիա

10. Ոտարազգի բառերի մեջ ո գրվում ե լ և ն բաղաձայններից առաջ և կըկնատառ ո-ով վերջավորվող բառերի մեջ. որինակ՝

թեոլին
 ժուռնալ
 Մառն (գետ Ֆրանսիայում)
 Մառ.

g) մ և ն

1. Բոլոր շրթնային բաղաձայններից առաջ (թ, պ, փ) լսվում է ն և գրվում ե մ. որինակ՝

բամբակ
 ամպ
 ամփոփել և այլն:

2. Թ, պ և փ բաղաձայններից առաջ ն կորվի միայն ան նախածանցով կազմված բառերում. որինակ՝

անպեսք ան-պեսք
 անփույր ան-փույր
 անբերդի ան-բերդի և այլն:

Այս կանոններից դուրս են մնում շուրջ 1000 բառ. Ուստի պետք է ընդունել, վոր պատմական տիպի սխալները վերացնելու համար աւենակարեվոր միջոցը կանխելու միջոցն ե. Յեթե հնչյունական տիպի սխալների համար անհրաժեշտ եր մշակել աշակերտների խոսքի կենտրոնների ըմբռնումների մեջ համակցություն, բառն արագությամբ հնչյունների և վանկերի վերածելու և հնչյուններից բառեր համագրելու կարողություն, ապա այստեղ անհրաժեշտ ե նաև «վերածման» ունակություն, այսինքն՝ աշակերտը պետք է սխալ լսի և ճիշտ գրի,

որինակ, լսի բարտի—գրի բարդի, լսի մարթ—գրի մարդ, լսի ընդնել—գրի ընկնել և այլն:

Դրա համար անհրաժեշտ են, վոր աշակերտի հիշողության մեջ բառի տեսողական և մոտորական տպակորություններն ամուր լինեն, կայուն և անջնջելի: Այդ նպատակով գործադրովում և արտազրությունը, վորպես գլխավոր աշխատանքի տիպ:

Աշակերտը պետք է հաճախ և յերկար ժամանակ տեսնի պատմական տիպի սխալ յինթաղրող բառերը, ուստի լսվ կիխնի, վոր նույնիսկ արտագրության տիպի գրափոր աշխատանք տալիս, պատմական գրություն ունեցող բառերը գրվեն գրատախտակին և ամբողջ դասի ընթացքում չենջվեն:

Լսվ են, յեթե նման բառերի աղյուսակները կախ տված լինեն դասարանի պատերից: Այդ ավելի ևս խոշոր չափով կնպաստի աշակերտի տեսողական տպագրությունների խորացմանն ու կայունացմանը: Մյուս կողմից աշակերտը յերկընտրանքի մեջ լինելիս կնայի այդ բառերին և կգրի: Բայց ամեն մի դասարանում ամեն տեսակի ուղղագրական աղյուսակ կախ տալը միտք չունի: Ուղղագրական աղյուսակ պետք ե ունենալ II, III և IV դասարաններում, վորտեղ կանխելու մեթոդը ամենահիմնական մեթոդն են:

Թեեւ ասացինք, վոր պետք ե արտագրություն տալ այս տիպի սխալները վերացնելու համար, բայց արտագրությունը բավական չեն, քանի վոր «վերածման» ունակություն ձեռք բերելու համար միայն արտագրությունը տեղին չեն անպետք են: Արտագրության հետ միաժամանակ պետք ե տալ նաև թելագրություն՝ իր բոլոր տեսակներով: Սակայն թելագրության նյութն ընտրելիս պետք ե այնպես անելի վոր նրա մեջ չլինեն, ուսուցչի կարծիքով, աշակերտի հիշողության մեջ չկայունացած բառեր: Յեթե այդպիսի բառեր կան, այդ դեպքում թելագրության տեսակը կվորուի, թե ինչպես պետք ե փարզել: Կիխնեն դեպքեր, յերբ անհրաժեշտ կլինի բառը գրել գրատախտակին և ապա թելագրություն կատարել և կամ աշակերտների ուշագրությունը հրավիրել աղյուսակում գրքած բառի կամ բառերի գրության վրա, ապա սկսել թելագրությունը և այլն: Սխալների այդ տիպի վերացման համար կարևոր նշանակություն ունի ուսուցանական թելագրություն, այսինքն հանապատրաստից թելագրությունը, բայց նախորդ դասերին բառերը ճիշտ գրելն ապահովելուց հետո:

Շատ անհրաժեշտ ե անգիր արած վոտանագորները գրելը: Այս դեպքում ուսուցիչը վորոշելով, թե տվյալ վոտանագորի մեջ վ՞որ բառերն են, վոր սխալների տեղիք են տալիս, այս կամ այն կերպ կկանին նրանց գրության սխալը, կոժանդակի աշակերտին «վերածման» ունակությունները խորացնելու: Վոտանագորը գրելիս աշակերտն զբաղվում

ե ինքնաթելադրությամբ, վորը, վորպես գրավոր աշխատանքի մոմենտ, նույնանում ե շարադրության հետ: Բայց այդ աշխատանքը շարադրությունից տարբերվում ե նրանով, վոր այստեղ տեքստը, ուրեմն և բառերը, արվում են պատրաստի, մինչդեռ շարադրության մեջ աշակերտն ինքն ե ընտրում բառերը:

Նարադրությունը լինու վարու չափով դեր է խաղում պատմական տիպի սխալների վերացման համար: Այստեղ աշակերտն ինքն ե ընտրում բառերը և թելագրում իրեն: Այդ աշխատանքի ընթացքում նա կատարում է նաև «վերածման» մտքում սխալ արտասանում, բայց ճիշտ գրում: Նարադրությունը սակայն լիակատար չափով չի ապահովում ուղղագրության ուսուցումը, քանի վոր աշակերտի բառապաշարը խիստ սահմանափակ է և նա շարադրությունը գրելիս բառերի ընտրությունը կատարում է իր խիստ սահմանափակ բառապաշարից:

Միջնակարգ դպրոցի ամբողջ ուսման տեսողության ընթացքում աշակերտը պետք է ծանոթանա հայերենի վողջ կամ համարյա վողջ բառամթերքի հետ, իսկ մինչև չորրորդ դասարանը՝ գործածական վողջ բառամթերքի հետ: Ուստի ուղղագրության ուսուցման նպատակներով պետք է հաճախ տալ արտագրություն և թելագրություն, աշխատելով, վոր աշակերտն այս գրափորների մեջ հանդիպի իր չգործածած, բայց անհրաժեշտ բառերին և սովորի նրանց ուղղագրությունը:

Յերբ ուսուցիչը պարզում է, վոր աշակերտները պատմական տիպի սխալներ շատ են կատարում, ապա նա պիտի յեղակացնի, վոր աշակերտները չունեն բառեր գրելու շարժումնային և տեսողական կայուն մտապատկերներ, ինչպես նաև «վերածմելու» ունակություն: Այդ զեպքում ուսուցիչը պետք է այդ ունակությունների մշակման և կայունացման վրա աշխատի վերևում ցույց տված յեղանակներով:

Ուսուցիչը գրափոր աշխատանքները պետք ենախապատրաստած տա, ուղղագրության (լեզվական այլ խնդիրների կողքին) ուսուցման վորշակի նպատակագրում ունենա՝ այս կամ այն գրափորը հանձնարարելիս: Ամենակարենը սումենտն այն է, վոր ուսուցիչը աշակերտների կատարած սխալները տիպալորի, խմբավարի և նպատակ դնի վորոշ տիպի վորոշ խումբ սխալներ վերացնելու այս կամ այն ժամանակամիջոցում: Դրանից հետո ուսուցիչը կկարողանա պարզել, թե քանի անգամ, ինչ տիպի աշխատանքներ պիտի տա: Առանձին ուղղագրություն պիտի նվիրել պատմական տիպի սխալների խմբավորմանը և ուսուցման հերթականությանը՝ և ժամանակի տեսակետից: Ուսուցիչը պետք ե պատմական տիպի վերացման սխալների մեջ ժամանակամատական տեսակետից: Ուսուցիչը պետք ե պատմական տիպի վերացման սխալների խորացնելու համար պետք է հատուկ աշ-

խատանքներ կազմակերպի և տվյալ ժամանակամիջոցում աշակերտության ուշադրությունը բների այս տիպի սխաներ յենթադրող բառերի ուղղագրության վրա:

3. Քերականական տիպի սխաները խիստ բազմազան են: Այդ տիպի սխաները վերացնելու սիմել միջոցը քերականություն սովորեցնելն է, բայց քերականության ծրագրային նյութը տարբեր ձևով և չափով և բաշխված ըստ դասարանների: Այդուհանդերձ քերականական տիպի համարյա բոլոր սխաները կապված են կամ բացատրվում են քերականական գիտության այն ծավալով, վոր տրված ե III և IV դասարաններում: Յերբորդ դասարանում աշակերտները ծանօթանում են գոյական անվան և նրա հոլովերի հետ, բայց խոսարհանական պարզ ձևերի հետ, անձնական դերանվան հետ: Չորրորդ դասարանում աշակերտները ծանօթանում են բառակազմության հետ, հնչյունափոխության պարզագույն գեղագերի հետ, բոլոր խոսքի մասերի հետ, բացի մակրայից: Այդ ընթացքում քերականական տիպի սխաները մասամբ վերանում են: Բայց չափութեած և մտածել, թե քերականություն սովորելով աշակերտներն այլևս քերականական տիպի սխաներ չեն անի: Մինչեւ քերականական գիտությունն ունակությունն չդառնա, խոսքի բոլոր կենտրոնների մեջ համակցության և «վերածման» ունակություններ չստեղծվեն, չի կարելի ուղղագրության ուսուցումն ավարտված համարել: Վերջի վերջո քերականական տիպի սխաները պատմականից տարբերվում են նրանով, վոր առաջինների վերածման համար ոգտագործում և քերականությունը, այսինքն սխալը կանխելու կամ ճշշտը զրել սովորեցնելու և ուղղելու համար ոգտագործում ենք նաև քերականությունը, մինչդեռ յերկորդ գեղագում, տեսողական մտապատկեր ստեղծելուց բացի ուրիշ միջոց չունենք: Քերականական կանոններով ուղղագրությունը բացատրելը հեշտացնող միջոց ե, բայց վոչ սպառող: Քերականական տիպի սխաներն ուղղելը հնարավոր և միայն այն ժամանակ, յերբ այդ բառերի և ձևերի գրությունը պատմական տիպի նման դարձել և վարժություն և ունակություն:

Քերականական տիպի սխաների մեջ դասեցինք նաև ձայնափորների, յա, իա և ուլ յերկնչյունների, յ ձայնակապի ուղղագրությունը, քանի վոր դրանք կամ անմիջապես կապված են քերականության հետ, կամ մասամբ բացատրվում են քերականական կանոններով:

ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԶՅՅԱԿԱՄԸ

Հայերենում ձայնափորները խիստ պարզ են. բացի մի դեպքից (և և յե) մասցածներն իրար հետ շփոթվել և կամ մեկը մյուսով փոխարինվել չեն կարող: Ուղղագրական տեսակետից ա, ու, ի, ո ձայնա-

վորները վոչ մի դժվարություն չեն ներկայացնում և տեղի ունեցող սխալների մեջ այս հնչյունների անկանոնության չենք հանդիպի: Լինում են միայն ու-ն ո գրելու դեպքեր, այդ ել վերաբերում ե ծեռագրին կամ անուշադրության: Այս ձայնավորների սխալը միայն կարող ե տեղի ունենալ բարբառային ապեկցության և կամ բառին պարզապես անծանօթ լինելու հետևանքով:

Ուղղագրական սխաների մեջ հաճախակի յե ը-ի սխալը: Ը-ի սը-իաներ պատահում են բառակզբում, բառավերջում և բառամիջում: Այդ դեպքերից յուրաքանչյուրը հետևանք ե տարբեր որինաչափությունների և տարբեր պատճառների: Բառավերջի ը-ն (ձայնավորով վերջավորվող բառերի համար ն-ն) հայերենի վորոշ հոդին ե: Հայերենում աշխարհաբար ձև ունեցող բառ չկա, վոր վորոշյալ առումով գործածության դեպքում ը կամ ն հոդը չունենա: Այդտեղ սխալ կարող են անել հայերենի բարբառների այն ներկայացուցիչները, վորոնք իրենց բարբառում ը-ն վորպես վորոշիչ հոդ չունեն: Այս սխաները վերացնելու միակ միջոցն ե բացատրել հայերեն գրական լեզվի հոդը, նրա նշանակությունը և նրա գործածությունը: Պետք ե բացատրել, վոր գոյական անունները մեր լեզվի մեջ զործ են ածվում իրենց ընդհանուր առումով (անորոշ անուն) և կոնկրետ առումով (տվյալ առարկան):

Կան հազար ու մի տեսակ պատեր, ծաներ, տեսեր և կոչելով նրանց պատմականից տարբերվում են նրանց, խոսում ենք նրանց մասին, վորպես առարկաների տեսակի մասին: Բայց յերբ ուղում ենք տվյալ կոնկրետ առարկայի մասին խոսել, ավելացնում ենք ը (մեր պատք, ձեր ծառը, այս տունը):

Բացատրելու ժամանակ պետք ե վերցնել վոչ թե առանձին բառը, այլ կապակցությունը, վորտեղ տվյալ գաղափարը թելադրվի կամ պարզ լինի: Ամենալավ այն ե, վոր բառը վերցվի այս, այդ, այն ցուցական դերանունների հետ (այս պատք, այդ տունը, այն գիրքը):

Բարձր խմբերում պետք ե ավելացնել, վոր գրաբարը ը հոդ չի ունեցել և նրա վորոշիչ հոդը յեղել ե-ն: Այդ ն.ն սակայն չի գործածվել այնպես, ինչպես աշխարհաբարում. որինակ՝ բարձրաւրյուն տանի, գուր հորեն, բազմեւրյուն զարդին, և այլն:

Գրաբարում հոդը դրվում ե հատկացուցիչի վրա, մինչդեռ աշխարհաբարում՝ հատկացյալի. որինակ՝ տան բարձրաւրյունը, հոր գուրը, զարդի բազմեւրյունը:

Յերկրորդ կանոնը, վորը պետք ե սովորեցնել ը վորոշող հոդի մասին, դա այն ե, վոր հաջորդ բառը ձայնափորով սկսվելիս, նախորդ բառի վորոշիչ ը հոդը փոխարինվում ե ն-ով: Այս կանոնը, մեր կարծիքով, ստեղծում ե լեզվի բարեհնչություն, բայց պետք չե պարա-

գիր դարձնել: Մի քանի վարժություններ, հատկապես գեկան տեքստի վրա կատարած, հեղտությամբ յուրացնել են տալիս ը.ի ուղղաղրական կանոնը: Վանի բարբառի ազդեցությամբ խոսողներին պետք ե մի քիչ ավելի զբաղեցնել դրանով: Ազգբնական շրջանում պետք ե առաջարկել տեքստի մեջ հանդիպած յուրաքանչյուր դեպքը հիմնավորել և բացատրել: Այսպես, որինակ՝ առաջարկել այսպիսի հարց՝ Գտեք վորոշող հոգով գործածվող բոլոր գոյականները և պարզեցնեք, թե ինչու յեն այդպես գործածվում:

Հ-ն սխալ ե գրվում նաև բառասկզբում: Այդ սխալը չեր լինի, յեթե հայերենը մի առանձնահատկություն չունենար, այդ այն ե, վոր հայերենում, սկ, սպ, սա, սր, սէ, սպ, սէ, զգ, զբ, յերկնչյունները (միակցությունները) արտասանության մեջ հասարավոր չեն առանց սկզբից կամ միջից ք ունենալու. որինակ՝ պետք ե լինի կամ զբք, կամ բզբ, կամ սրի, կամ ըսկ, կամ սրս, կամ ըստ: Յեկ քանի վոր հայերենում ք-ով սկսվող շատ բառեր կան, ուստի տեղի յե ունենում շփոթ: Լինում են դեպքեր, հատկապես անվարժ գրողների մոտ, «սկիզբ» զըրվում ե «ըսկիզբ», իսկ բնարել գրում են «նարել»: Բառամիջում ք-ի գործածության կանոնը պետք ե ձևակերպել այսպես. գրական հայերենում բառասկզբում յեվ բարդարյուների յերկրորդ բաղադրիչի սկզբումը լսվելիս գրվաւմ ե ք, բացառությամբ սկ, սպ, սա, սր, սէ, սպ, զբ, զգ կապակցաւրյուներով սկսված բառերի: Որինակ՝ անընկեր, դասընթաց, զուգընթաց, խոչընդուռ, անսկիզբ, անզզույշ և այլն:

Ուսուցման միակ միջոցն այդ կանոնը բացատրելն ե ու վարժության միջոցով ունակություն դարձնելն ե: Ուղղած տետրականները վերաբարձնելիս պետք ե այսպիսի սխալների մասին ասել, կանոնը կըրկնել տալ և գրել տալ գրատախտակին: Այս կանոնն սժանդակում ե նաև ք-ի գործածությանը բառամիջում:

Հայերենում ք ն բառամիջում գործ ե ածվում միմիայն բարդ կամ նախածանցավոր բառերի մեջ, յերբ յերկրորդ բառը կամ բառարմատն սկսվում ե ք-ով (տես վերևի որինակները):

Յ ԶԱՅՆԱԿԱՊՀ

Ուղղագրական սխալների մեջ հաճախ են պատահում ե ձայնավորի և յե յերկնչյունի շփոթումը և սխալը:

Ե լսկելիս ամենուրեք գրվում ե ե, իսկ բառասկզբում յե լսկելիս գրվում ե յե: Սակայն ձայնավորներից հետո այդ ընդհանուր որենքը խախտվում ե: Դեպքեր կան, յերբ լսվում ե յե գրվում ե ե, որինակ՝ տիեզերք, բայց ընդհակառակը լինել չի կարող: Հայերենը չի սիրում արտասանել յերկու իրար կողքի յեղած ձայնավորներն անջատ - անջատ

«ինչպես յեվրոպացիները՝ բա, իդեա, ֆեոդալիզմ և այլն), դրանց արանքում միշտ դրվում ե յ ձայնակապը: Նույնիսկ յեվրոպական իդեա, բառն արտասանվում ե իդեյա, դուես: Հարավոր ե ձայնավորների հետեւյալ խմբակցությունը».

Առ, այա, ան, այե, ափ, այի, առւ, այս, աս, այս—Հայաստան, հմայնել, կային, հմայություն, հայոց:

Եա, ելա, եի, ելի, եռ, եյու, եյո—ելական, ելին, ելուրյունի ռապելով:

Իբ, իա, իե, իօւ, իու—հայելիի, Մարիամ, սիեզեր, լիւրյուն, ադիուր:

Ուա, ուե, ուի, ուու, —բարժուազիա, դուես, ալերուիզմ սուումի:

Ուո, ուա, ոյե, ոփ, ոսի, ոու, ոյու, —կապերացիա, բա, զայական, պսեզիա, նոյեմբեր, եգոփս, խոյի, կոյուղի:

Հ ձայնավորը չի կապվում այլ ձայնավորների հետ գոչ մի դեպօւմ:

1. Ա.ՅԱ. Ա.Յ.

Յլա կապակցությունը հայերենում առատ ե. որինակ՝

Հայաստան	ուղղահայաց
հայացք	կայազոր
դայակ	շրջահայաց
զգայարան	պայազատ և այլն:
ներկայացուցիչ	

Նույն են և բոլոր ական ածանց ունեցող բառերը (հեռավայական, կամայական, լիկայական), վորոնք հիմքում ունեն ա վերջնահնչյունը: Հայերենում առ զուգագիպություն չկա (բացի աալուսին բառից): այդ կարող ե լինել միայն յեվրոպական բառերի մեջ: Միայն մի դեպք կա, յերբ յերկու ա - ն առանց ձայնակապի յեն գրվում, գա յե ամենանախածանցով կազմված բարդությունը, յերբ բարդվողի յերկրորդ բառն սկսվում ե ա - ով: որինակ՝ ամենաանկատար, ամենաատելի և այլն:

2. Ա.ՅԵ կապակցաւրյունը

Հայերենում այն հանդիպում ենք հայ, նայ, գայ, ինայ, կայ, բայ և նման արմատների մեջ, վորոնցից կազմվում են նայել, նայել, գայել (շրջագայել), կայել (յերկակայել), հայեցակետ, հայել, բայել (յերկըայել) և վայելել կամ վայելուչ: հանդիպում ենք նաև բարդության մեջ, յերբ հաջորդող բառն սկսվում ե յե յերկնչյունով (հեշտայել): Մնացած գեպքերը պատահում են լատինական այեր արմատրց կազմված: բառերի մեջ այերոպան, այերուրյուն և այլն:

3. Ա Յ Ի

Այի կապակցությունը հայերենում հանդիպում է միայն մայիս և Արամայիս բառերում, մնացած բոլոր դեպքերը վերաբերում են ային ածականացող ածանցին, բայերի խոնարհմանը կամ տուվ վերջացող գոյականների հոլովմանը։ Այս ձև շատ պարզ և և սովորեցնելը հեշտ։ Ոտար լեզուներից փոխ առած բառերի տի կապակցության մեջ յ չի դրվում. որինակ՝ Ուկրաինա, Տասիա, նախի և այլն։

4. Ա Յ Ո Ւ

Այս կապակցությունը պատահում է հայերենում միայն ուն-ով ածանցվող բառերի մեջ և թեքման ժամանակ, յերբ բառի հիմքն ունի տ կամ այ վերջին հնչյունը. որինակ՝ գնայուն, մնա — մնայուն, մայ — մայուն, հայ — հայուն և այլն։ Այստեղ կարող են լինել սխալներ, յերբ խոսողները բարբառային լեզվի ազդեցությամբ յ չեն կարողանում արտասանել և փոխարինում են հովկ (կահուն՝ փոխանակ կայօւն, մահօւն փոխանակ մայօւն՝ և այլն)։ Հայերենի մի բառն ունի միայն այդ կապակցությունը, այդ պայմանակ բառն ե։

5. Ա Յ Ո

Առ կապակցությունը հանդիպում է ոտարազգի բառերի մեջ. տաւդիտեհա, տաւդինցիա, մնացած դեպքերը հայերենի բարդություններ են՝ այնուամենայնիվ, այդուամենայնիվ, տայնուամենայնիվ և այլն։

6. Ա Յ Ո

Այս կապակցությունը հայերենում միայն տառ բառի մեջ ե, մնացած դեպքերը վերաբերում են ածանցումներին, կամ թեքմանը. որինակ՝ մալորդ, տղայով, վայող։

Առ կապակցությունը հանդիպում է նորագույն ժամանակներում փոխ առնված ոտար բառերի մեջ. որինակ՝ կառյին։

7. Ե Ա

Եա կապակցությունը հանդիպում է միայն Էվեարկել, Անդրեաս և Քետիան բառերում. մնացած դեպքերն ոտարներից փոխ առնված բառերի մեջ են հանդիպում (իդեա, իդեալ)։

8. Ե Յ Ա

Այս կապակցությունը հանդիպում է ածանցումների և թեքման ժամանակ այն դեպքում, յերբ նախորդող բառը վերջավորում է ե-ով. եյակ, ելական, ելապես, խարեյական, միջորեյական, հեյական, բայեյական և այլն։

9. Ե Ւ

Միայն բայերաց և նման բառերի մեջ ե պատահում

10. Ե Ց Ի

Հանդիպում է ըղձական յեղանակի մեջ՝ գրեյի, գրեյիր և այլն, ոժանգակ բայի մեջ և հողովման ձևերի մեջ. որինակ՝ բայեյի, նրեյից, ելինք և այլն։

11. Ե Ո

Ես կապակցություն հայերենում չկա. Այդ կապակցությունն ունեցող բոլոր բառերը յեվրոպականից փոխառյալներ են. այսպես՝ Բարդութիմեան, Գեորգ, քեորեսիկ, քեարիա, քեորեմ, իսկնորդ, լեգենմ, Ֆեոդալ և այլն։

Ես կապակցությունը հանդիպում է ե-ով վերջավորվող բառերի թեքման ժամանակ. որինակ՝ ըոպեյով։

12. Ե Ց Ո Ւ

Այս կապակցությունը հայերեն բառարմատների մեջ ընալ չկա, պատահում է միայն ածանցումների և թեքումների մեջ, յերբ բառի հիմքը վերջավորում է ե-ով (յա). որինակ՝

Ինքնագործունելյություն, խարելյություն, պաշտոնելյություն, քրիստոնելյություն, հրելյություն։

13. Ի Ւ

Հանդիպում է ոտարազգի և հայերեն վերջավորվող հատուկ անունների, նաև հասարակ անունների մեջ (որինակ՝ Դարիբալդիի, հայելիի, նոգնակիի և այլն)։

14. Ի Ո

Այս կապակցությամբ հայերենում կան հետեւյալ բառերը.

Գօրծիական

Դասիարակ

Մարիամ

Ծվելիանոս

Փիփար (խոսիր)

Ճիածան

Կրիա (թեև ստուգաբանորեն ճիշտ կլիներ գրել կրյա) նաև ձի, դի, ըի, իի, մի, միավանկ բառերի, ի վերջավորություն ունեցող բազմավանկ բառերի (գյուղացի) ածանցումների և նի արմատի բարվան և ածանցումների մեջ։ Մնացած դեպքերը վերաբերում են յեվրոպական բառերին. որինակ՝ Անգլիա, Իտալիա, Բելգիա, Սօցիալիզմ, պրակտարիատ, Ամալիա, Ոֆելիա և այլն։

Իս և յա կապակցությունների արտասանությունը բառի մեջ նույնն եւ. Պետք և հիշել, վոր բացի վերեւը հիմնարարությունը, այս բառը առ ՏԱՏԱՐՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ոերի մեջ գրվում ե միշտ յա. որինակ՝ փալյայ, սենյակ, մատյան և այլն, Յա զրվում են նաև ոռւսերեն կրամատված հատուկ անունների մեջ. որինակ՝ Վոլոդյա, Ֆենյա, Ասյա (վոչ յերկրամասը, վորը գրվում ե Ասիա և այլն:

15. ԻԵ

ԻԵ կապակցությամբ կա միայն մեկ հայերեն բառ՝ տիեզերք. իԵ կապակցություն ստացվում ե ձի, թի և դի բառերի հոգնակիներում՝ ձիւր, թիւր, դիւր: Մնացած բառերը փոխառյալ են և կամ հայացված, հատուկ անուններ, վոր նույնպես չփոխ են առնված, որինակ՝ նիերարխիա, նիերոգլիֆ, Դանիել, Գաբրիել և այլն:

16. ԻՌԻ

Այս կապակցությունը հանդիպում է հայերենում բի, լի, ծի, մի բառերի ածանցման դեպքում, ինչպես՝ լիւրյուն, միւրյուն, լի ու լի, ձիւր: Մնացած դեպքերը վերաբերում են յելլրոպական բառերին (պրեգեղիում, ակիմարքում և այլն):

17. ԻՈ

ԻՕ կապակցությամբ հայերենը նույնպես աղքատ ե: Այդ կապակցությունն ունեն միայն աղիողում ու որիորդ՝ բառերը և ի վերջավորվող բառերի հոլովման ու բարդման ձևերը (թի—թիով, լի, ծի, մի): Մնացած դեպքերը հանդիպում են ոտար լեզուներից վեցրած բառերի մեջ՝ ամբիոն, տիփոն, ախտոմ, մելիոռացիա, բիուզիա, պիոներ, Ֆիզիոլոգիա և այլն:

18. ՈՅՍ

ՈՅ ձևով մի բառ կա միայն՝ նոյակապ, մնացած դեպքերը վերաբերում են ո վերջավորություն ունեղող հիմքերի ածանումներին՝ տիտյան, գօյական, գօյամուր, խոյակ, խոյանալ, ներգոյական, բարյական և այլն:

19. ՈՅ

ՈՅ կապակցությամբ գրվում են յելլրոպական բառեր. որինակ բառ:

20. ՈՅԵ

Այս կապակցությամբ ունենք՝ նոյեմբեր և նոյեմզար բառերը:

21. ՈԵ

ՈԵ կապակցությամբ գրվում են յելլրոպական բառերը, որինակ՝ պետ, պաեղիա:

22. ՈՅԻ

Այս կապակցությունն ստացվում ե ոյ վերջավորվող բառերի թեքման ժամանակ. որինակ՝ խոյի:

23. ՈՒ

Այս կապակցությամբ մի բառ միայն ունենք, այն ել վերցված ե յելլրոպական թիւրիալը՝ հոգիս:

24. ՈՅՈՒ

Ոյու ունեցող յերկու բառ կա՝ կոյուղի և գոյություն:

25. ՈՈ

Հայերենում այդ կապակցությամբ բառ չունենք. կան միայն կոռպերցիա և կոռդիմացիա փոխառյալ բառերը:

26. ՈՒԱ

Գործածվում ե այսու, այդու, այնուամենայնիվ բառերի մեջ և յելլրոպական՝ բուրգուազիա, ոեպերտուար և նման բառերի մեջ:

27. ՈՒԻ

Հայերենում այդ կապակցությամբ բառ չունենք, միայն յելլրոպական դաւես բառը գիտենք:

28. ՈՒՈՒ

Բառ չկա:

29. ՈՒԻ

Հայերենում չկա. հանդիպում ենք միայն յելլրոպական ալտուիզմ բառի մեջ: Ու վերջավորություն ունեցող համարյա բոլոր բառերում թեքման ժամանակ ուն վերածվում ե վի-ի. որինակ՝ դասառու—դասասիի, կատու—կատվի, բու—բիլի առու—առվի և այլն:

Վորոշ դեպքերում, յերբ ու վերջավորություն ունեցող բառերի թեքման (հոլովում և խոնարհում) ձևերի մեջ ուն չի վերածվում վի-ի, ստացվում ե ույի կապակցությունը (ուրու—ուրույի):

30. ՈՒՅՈՒ

Բառ չկա:

Ինչպես տեսնում ենք՝ յ ձայնակապ (յերգու ձայնավոր միացնող) չի դրվում յելլրոպական բառերի մեջ (այեւ արմատով կազմված բառերի բացառությամբ) յել հայերեն բառերի մեջ ի ձայնավարից հետո *:

Քերականական տիպի սխալները վերացնելու համար ընդհանրապես պետք ե տալ բացատրական արտագրություն, բացատրական թելադրություն և քերականական վարժությունները: Ծատ կարևոր նշանակություն ունի աշակերտների ծանոթությունը բառակազմության հետ, վորովհետև շատ դեպքերում բառերի արմատներն ու ածանցները տարբերելն անմիջապես ոգնում ե ճիշտ գրելուն:

Որինակ՝ յեթե աշակերտն իմանա, վոր խոսք բառի արմատն ե խոս, հեղտությամբ կը մը ունենի, վոր վերջում է կգրվի, քանի վոր մենք ունենք է ածանց և վոչ կ: Յեթե աշակերտն իմանա, վոր պատկել բառի արմատն ե պառիկ, չի սխալվի և չի գրի բ-ով: Յեթե աշակերտն իմանա, վոր ընդիանուր բառի արմատն ե հանուր, ապա ընդ նախածանցը կգրի

* Ա. Ղաբրիյան. «Հայոց լեզվի քերականություն» էջ 23. 1934 թ.

ոերի մեջ գրվում ե մէշտ յա, որինակ՝ փայտյա, սենլտկ, մատյան և այլն, Յա գրվում են նաև ոռւսերեն կրճատված հատուկ անունների մեջ. որինակ՝ Վալոդյա, Ժենյա, Ասյա (վոչ յերկրամասը, վորը գրվում ե Ասիա և այլն:

15. ԻԵ

ԻԵ կապակցությամբ կա միայն մեկ հայերեն բառ՝ տիեզերք. իԵ կապակցություն ստացվում ե ձի, թի և դի բառերի հոգնակիներում՝ ձինք, թինք, դինք: Մնացած բառերը փոխառյալ են և կամ հայացված, հատուկ անուններ, վոր նույնպես չփոխ են առնված, որինակ՝ նիերարխիա, նիերողլիֆ, Դանիել, Գաբրիել և այլն:

16. ՈՒԱ

Այս կապակցությունը հանդիպում է հայերենում թի, լի, ծի, մի բառերի ածանցման դեպքում, ինչպես՝ լիւրյան, միւրյան, լի ու լի, ծիու: Մնացած դեպքերը վերաբերում են յելլրոպական բառերին (պրեզենտիվ, ակվարիում և այլն):

17. ԽՈ

Խօ կապակցությամբ հայերենը նույնպես աղքատ ե: Այդ կապակցությունն ունեն միայն աղիոնորմ ու սրիորդ բառերը և ի վերջավորվող բառերի հոլովման ու բարդման ձևերը (թի—թիով, լի, ծի, մի): Մնացած դեպքերը հանդիպում են ոտար լիզուներից վերցրած բառերի մեջ՝ ամբիոն, ափիոն, ախիոն, մելիորացիա, բիոլոգիա, պիոներ, Ֆիզիոլոգիա և այլն:

18. ՈՅԱ

Ոա ձեռվ մի բառ կա միայն՝ նոյակապ, մնացած դեպքերը վերաբերում են ո վերջավորություն ունեղող հիմքերի ածանումներին՝ տիսյան, գոյական, զայամուր, խոյակ, խոյանալ, ներգոյական, բարյական և այլն:

19. ՈՅ

Ոա կապակցությամբ գրվում են յելլրոպական բառեր. որինակ բառ.

20. ՈՅԵ

Այս կապակցությամբ ունենք՝ նոյեմբեր և նոյեմզար բառերը:

21. ՈԵ

ՈԵ կապակցությամբ գրվում են յելլրոպական բառերը, որինակ՝ պենտ, պենդիա:

22. ՈՅԻ

Այս կապակցությունն ստացվում ե ոյ վերջավորվող բառերի թեքման ժամանակ. որինակ՝ խոյի:

23. ՈԻ

Այս կապակցությամբ մի բառ միայն ունենք, այն ել վերցված ե յելլրոպական թիւներից՝ կողիս:

24. ՈՅՈՒ

Ոյու ունեցող յերկու բառ կա՝ կոյուղի և գոյուրյան:

25. ՈՈ

Հայերենում այդ կապակցությամբ բառ չունենք. կան միայն կոռպերացիա և կոռորդինացիա փոխառյալ բառերը:

26. ՈՒԱ

Գործածվում ե այսու, այդու, այնուամենայնիվ բառերի մեջ և յելլրոպական՝ բուժման բառերուագիա, ունան բառերի մեջ:

27. ՈՒԵ

Հայերենում այդ կապակցությամբ բառ չունենք, միայն յելլրոպական դաւելս բառը գիտենք:

28. ՈՒՈՒ

Բառ չկա:

29. ՈՒԻ

Հայերենում չկա. հանդիպում ենք միայն յելլրոպական ալտուիզմ բառի մեջ: Ու վերջավորություն ունեցող համարյա բոլոր բառերում թեքման ժամանակ ուն վերածվում ե վի. որինակ՝ դասառու—դասասկի, կառու—կատվի, բու—բվի առու—առվի և այլն:

Վորոշ դեպքերում, յերբ ու վերջավորություն ունեցող բառերի թեքման (հոլովում և խոնարհում) ձևերի մեջ ուն չի վերածվում վի, ստացվում ե ույի կապակցությունը (ուրու—ուրուի):

30. ՈՒՅՈՒ

Բառ չկա:

Ինչպես տեսնում ենք՝ յ ձայնակապ (յերկու ձայնավոր միացնող) չի դրվամ յելլրոպական բառերի մեջ (այեր արմատով կազմված բառերի բացառությամբ) յել հայերեն բառերի մեջ ի ձայնավարից հետո *:

Քերականական տիպի սխալները վերացնելու համար ընդհանրապես պետք ե տալ բացատրական արտագրություն, բացատրական թելադրություն և քերականական վարժություններ: Շատ կարևոր նշանակություն ունի աշակերտների ծանոթությունը բառակազմության հետ, վորովհետեւ շատ դեպքերում բառերի արմատներն ու ածանցները առըբերելն անսիշտապես ողնում ե ճիշտ գրելուն:

Որինակ՝ յեթե աշակերտն իմանա, վոր խոսի բառի արմատն ե խոս, հեղտությամբ կը մըրսի, վոր վերջում է կգրվի, քանի վոր մենք ունենք ի ածանց և վոչ կ: Յեթե աշտկերտն իմանա, վոր պառկել բառի արմատն ե պառիկ, չի սխալվի և չի գրի բով: Յեթե աշտկերտն իմանա, վոր ընդհանուր բառի արմատն ե համուր, ապա ընդ նախածանցը կգրի

* Ա. Ղարիբյան. «Հայոց լեզվի քերականություն», եջ 23. 1934 թ.

դով, և հանուր արմատի ի բաց չի թողնի: Յեթե աշակերտն իժանա, վոր ընթանալ բառի արմատն ե ընթ, իսկ անան ածանց ե, չի սխալվի և չի դրի ընդանալ, կարծելով վոր այդ ընդ նախածանցն ե և այլն:

Գրավորների տեսակներից են բառակազմության շուրջը կատարվող վարժությունները, վորի ժամանակ առաջարկվում ե տվյալ հոգածիքի մաջ յեղած բառերը վերլուծել ըստ կազմության:

Մի շարք ածանցների ուղղագրության մասին միշտ պետք ե խոսել և գրատախտակին որինակները գրել. գրանցից են՝ որդի, ուկի, ի, ային, ուրյաւն, վածի և նմանները: Այդ միջնորդ այդ ածանցների ուղիղ գրությունը տպավորվում է աշակերտի հիշողության մեջ:

Ուղղագրության համար պետքական ե նաև հնչյունափոխության գիտությունը: Դրա շուրջը ևս կարելի յե վարժություն տալ, առաջարկելով արտագրվելիք հատվածում հանդիպող հնչյունափոխված բառերի անփոփխ ձեզ գրել տեքստերի մեջ բառի կողքին և կամ տեքստի տակ:

Մեծատառի գործածության համար պետք ե կատարել բացատրական արտագրություն, նախորդը հիշեցնելով, թե վոր բառերը պետք ե սկսել մեծատառով: Կարելի յե հանձնարարել տետրակներում կազմել դասարանի աշակերտների անվանացուցակը:

Հոգնակիում յերկու և ունեցող բառերով պետք ե տալ վարժություններ՝ բացատրելով նրանց գործածությունը (որինակ՝ սեղան — սեղաններ, նստարան — նստարաններ և այլն):

Հարաբերական ածականների ուսուցման համար աշակերտներին պետք ե առաջարկել ընթերցանության նյութի միջից ընտրել այդպիսիները, կազմել աղյուսակ և ինքնուրույն կերպով բազմացնել այդ ածականների որինակները (որին. փայտա, փսխյա և այլն):

Թվական անունների ուսուցման համար՝ կանոնը բացատրելուց հետո կարելի յե կազմել փոքրիկ պատմվածք թվական անուններով, գրել գրատախտակին, թվերը նշանակերով արարական և հռոմեյական թվանշաններով, առաջարկելով արտագրել, գրերով վարտահայտելով թվերը:

Մի խոսքով՝ յուրաքանչյուր քերականական կանոն բացատրելուց հետո պետք ե անմիջապես կատարել նաև ուղղագրական վարժություններ, աշակերտի հիշողության մեջ ամրապնդելու համար թե կանոնը և թե ուղղագրությունը: Քերականական ընդհանուր սխաները պետք ե դարձնել պարապմունքի նյութ, բացատրելով մի ավելորդ անգամ կանոնը և ճիշտ գրել գրատախտակին:

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԻՊԻ ՍԽԱԼՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բարբառային տիպի սխաները բազմազան են և աշակերտական ինքնուրույն գրավորների մեջ կազմում են ամենամեծ տոկոսը: Ասացինք արդեն, վոր ինքնուրույն գրավորի ժամանակ աշակերտն ինքն

և իրեն թելագրում: Բարբառայնության ուժեղ ազդեցության տակ դանշող աշակերտը բառը թելագրում ե իրեն՝ բարբառային արտասանությամբ և ձևաբանությամբ: Այդ դեպքում տաճկահայ վորոշ խումբ ձայնեղները գրում ե թավ կամ խուլ (որին. շաբիդ) և խուլերը ձայնեղներ: պարսկահայ խումբը (մասմբ և վանեցիք) ձայնեղները գրում ե խուլ (պերան), և բաղաձայնից հետո խուլերը գրում ե ձայնեղներ: Մի շարք այլ դեպքում թավերը (խուլ շնչեղները) գրվում են խուլ, գրում են ավելորդ հնչյուններ (անգաջ, նանանչել, կանանչել, պարապվել): Կարնության գրատախտի խումբը (Ախալքալակ, Ախալցիա, Լենինական, Ղարս) խուլերը գրում ե ձայնեղներ (դասակարգ, Մուգուճ), վորոշ բառեր գրում ե կրկնատառերով (մենենակ, վազգել). Թիֆլիսեցիք բարբառեն գրում են Ա, (տափ, Մառօ, մուռօւ), իսկ բարանդուցցիք յ և ն բաղաձայնները փոխարինում են մեկը մյուսով (սայման, պահման) և այլն:

Բարբառային տիպի սխաները վերացնելու համար պահանջվում է շատ համար աշխատանք:

Ամենից առաջ անհրաժեշտ է «կոտրել», մշակել աշակերտների լեզուն, ընտելացնել գրական արտասանության սխտեմին, խոսել տալ կանոնավոր գրական արտասանությամբ: Նշանակում ե՝ գրավորի ուսուցման համար անհրաժեշտ նախապայման և հանդիսանում բանագործ խօսքի ուսուցումն ու գեղեցիկ առողջանությամբ ընթեցանաւրյունը լիվ այս դեպքում շատ ավելի, քան մյուս դեպքերում:

Բարբառախոս աշակերտին պիտի շատ կարդալ տալ, ուղղել արտասանությունը հենց կարգալու ընթացքում և, յե պետք լինի, բացատրել նրա բարբառի և գրական լեզվի տարբերությունները: Հատկապես գավառներում դասատուն պետք ե աշակերտական համարակության մեջ կարծիք ստեղծի հոգուտ գրական լեզվով խոսելուն, քաջալերի նրանց, ովքեր գրականով են խոսում:

Քերականական տիպի բարբառային սխաները վերացնելու համար պետք ե, բանագործ խոսքից բացի, դիմել նաև բուն քերականության ուղնության, պահանջ յեղած դեպքում ցույց տալով այն տարբերությունը, վոր կամ աշակերտի բարբառի և գրական լեզվի քերականությունների միջև: Յեթե այդ տարբերությունը խոնարհման և հոլովման մեջ նկատելի յե, ապա պետք ե, գրավոր գրավոր վարժություն, հանձնարարել այս կամ այն բայի գրավոր խոնարհումը կամ գոյականի գրավոր հոլովումը: Գրական լեզվին կանոնավոր տիրապետող աշակերտությանը չպետք ե նման աշխատանք հանձնարարել, քանի վոր այդ ձանձրալի յե, թեև ստուգման նպատակներով, պարզելու համար, թե վարքան են յուրացրել հոլովումն ու խոնարհումը, կարելի յե հանձնարարել նաև այդպիսի աշխատանք:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԿԱԽԱՊԱՏՐԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գրագիտության ուսուցման ժամանակ յուրաքանչյուր ուսուցիչ ամենից առաջ կանգնած ե լինում այն հարցի առաջ, թե յերբ ակադ գրաճանաչությունը: Պարզ ե, վոր չի կարելի գպրոց նոր յեկող յերեխային իսկույն և նոր կարգալու և գրելու պարագաներ տալ և անմիջապես սկսել գրագիտության ուսուցումը:

Ընդհանրապես գպրոց նոր յեկող յերեխաների նկատմամբ մեր առաջին խնդիրն այն պիտի լինի, վոր նրանց շուրջն այնպիսի մթնոլորտա ստեղծենք, վոր յերեխան բնական կերպով, աննկատելիորեն անցնի ընտանեկան կենցաղից դպրոցական կենցաղին, վորը մի շարք խնդիրներում այլ ձևով ե դրված: Յերեխայի համար բարենպաստ մթնոլորտա ստեղծելու համար պահանջվում է՝ 1. վոր յերեխան դպրոցում իրեն ազատ և անկաշկանդ զգա, վոր նա չընկճի, լինի վստահ ու համարձակ իր մտքերն արտահայտելու ուղղությամբ. 2. դպրոցում դեպի յերեխան ստեղծել խնամքոտ վերաբերմունք. 3. յերեխաներին հաղորդելիք նյութերը վերցնել շրջապատի ծանոթ միջավայրից, 4. նրանց մեջ ամրացնել կարգապահություն:

Սակայն այդ անկաշկաննութունը և բարենպաստ մթնոլորտը չպետք է դառնա անկարգության պատճառ, վոր յերեխան դասի ժամանակ ամեն ըովե խոսի, խոսի ամեն բանի մասին, խոսի ընկերների հետ, խանդարի ընկերներին և այլն: Հենց առաջին որերից պետք ե աշխատել յերեխաների մեջ զարգացնել պատասխանատվության զգացմունքը, պատասխանատվություն կոլեկտիվի դեմ, գիտակցական կարգապահության անհրաժեշտություն, աշխատանքների մասնակցելու յեղանակը—հարցնելու, պատասխանելու և այլն:

Հենց առաջին որերից յերեխաները պիտի գիտակցեն, վոր ամեն մի աշակերտ պարտավոր ե դասերին ուշադրությամբ լսել դասառություններին:

Մյուս աշակերտներին, վորովհետև նրանք ինչ վոր ասում են, բոլորի համար են ասում, վոր նա ել պարտավոր ե այդ բոլորն իմանալ, իսկ այդ բոլորն իմանալ, համար նա պարտավոր ե լավ և ուշադրությամբ լսել մյուսներին և կարգապահ լինել:

Այսպիսի մթնոլորտ ստեղծելու համար մինչև գրագիտությունն անցնելը պետք ե կազմակերպված ձևով վորոց նախապատրաստական աշխատանք կատարել:

Նախապատրաստական աշխատանքների նպատակը պետք ե լինի՝ առաջ բերել յերեխաների մեջ մղում դեպի կարդալու. և գրելու գործը. բ) յերեխաներին տեխնիկական պատրաստել գրագիտության նախական տարրերն ըմբռնելու համար:

Անհրաժեշտ ե նախապատրաստական աշխատանքների ընթացքում ծանոթանալ յերեխաների մտապատկերներին, նրանց բառապաշարին և այնուհետև զրուցի, պատմվածքների և դասատվի ընթերցանության միջոցով զարգացնել նրանց բառապաշարը: Սովորեցնել յերեխաներին արտահայտվել, վարժեցնել, վոր նրանք ունակություն ձեռք բերեն և կարողանան կապակցված կերպով, փոքրիկ նախադասություններով պատմել նյութը:

Զրուցների և պատմվածքների նյութը պետք ե վերցնել մեծ մասմբ յերեխաների իրենց կամ շրջապատի կյանքից ու յերեսու յթներից: Կարեռն այն ե, վոր այդ պատմվածքները լինեն մատչելի, բայց վոչ չոր ու ցամաք. զրանց բովանդակությունը պետք ե հետաքրքրի յերեխաներին, — հույզեր առաջացնի նրանց մեջ, ստեղծի մտապատկերներ, վորպես գեղարվեստական ապրումների արդյունքք Յերեխաների ամառային կյանքը դյուղում, կոլիխողում, սարում, անտառում, ճամբարում, սանատորիայում բավականաչափ հարուստ նյութ կտա այդ նպատակի համար: Անհրաժեշտ ե մեծ չափով ոգտագործել լավագույն մանկական գրքույները, մանկական թերթեր և այլն:

Դասառուն պատմելիս պետք ե ուշադրություն դարձնի իր լեզվին—վորքան կարելի յե՝ արտահայտվի պարզ և առողջանությամբ: Նախ յերեխաների ուշադրությունը կենարոնացնելու, ապա, վորպես որինակ յերեխաների համար, լավ գիտակցելով, վոր հենց առաջին որվանից յերեխաներն աշխատում են ամեն բանում հետեւ և նմանվել իրենց դասառություն:

Այնուհետև պետք ե խոշոր տեղ տալ յերեխաների ինքնուրույն արտահայտվելուն: Դասառուն պարտավոր ե յերեխաների լեզվին աստիճանաբար տալ ավելի ձեավորված ընույթ—լրիվ պատասխաններ պատմելու ժամանակ, պահպանել դեպքերի և յերեսութների հաջորդականությունը:

Նման զրուցներն ու պատմվածքներն առաջ են բերում յերեխա-

Ների մեջ մի շարք ստավատկերներ, սովորեցնում են դպրոցի նիստ ու կացին, զարգացնում յերեխաների բառապաշարը, մտցնում են վորոշ սիստեմ նրանց մտածողության և արտահայտելու ձևերի մեջ:

Կարևոր ե, վոր դասատուն այդ նպատակների հետ միասին հետապնդի նաև լեզվական վորոշ ունակություններ տալու աշխատանքներ. յերեխաները կարողանան գործածվող ֆրազների մեջ ըմբռնել առանձին բառերի նշանակությունը, կարողանան նախադասության մեջ բառերը ջոկել իրարից: Աշակերտներին աստիճանաբար պետք է սովորեցնել լրիվ պատասխաններ տալ:

Պատմելու և զրույցների ընթացքում դասատուն պետք է ստեղծի, այսպես կոչված, «գրադիտության ֆոնդ», այսինքն նկատի առնի վորոշ բառերի հաճախակի գործածությունը, վորոնք հետագայում ծառայելու յեն վրապես նյութ՝ գրաճանաչությունն անցնելու համար:

Այդ զրույցների շուրջը կազմակերպվում են նաև այլ աշխատանքներ. յերեխաները նկարում են, կառուցում, ծեփում:

Նպատակահարմար կինի առաջին զրույցը կազմակերպել յերեխաների հետ ծանոթանալու նպատակով:

Ծանոթանալ ազգանուններին և անուններին, վնրտել և գտնվում այս կամ այն աշակերտի տունը:

- Ամառը դու վորտեղ եյիր:
- Ովքե՞ր հյին քո ընկերները:
- Ի՞նչ աշխատանքներ եյիք կատարում:
- Ի՞նչ գրքեր են կարդացել ձեզ:
- Ի՞նչի մասին ե գրված այդ գրքում:

Յեվ այդպես շարունակելով՝ դասատուն մի կողմից ծանոթանում ե յերեխաների հետ և նրանց խոսելու և պատմելու ունակություններին, մյուս կողմից յերեխաների մեջ վստահություն և ներշնչում ազատ արտահայտելու իրենց ապրումները, հիշողությունները և տպավորությունները. Պատմելու ժամանակ, նրանց չպետք է շուտ — շուտ ընդհատել, վորպեսզի չընկճվեն և հետագայում պատասխանելիս բավականանան միայն «այս» կամ «վոչ» ասելով:

Հետևյալ անգամ դասատուն ինքն է պատմում փոքրիկ պատմություն յերեխաների կյանքից:

Նա պատմում է ամուսն մասին, յերեխաների կյանքը ճամբարում, ինչպես ուրախ և առողջ վերադառնում են ճամբարից, սկսվում են դըպրոցի պարապմունքները. յերեխաները հանգստացել են. ուրախ, զվարթ գալիս են դպրոց. բերքը հասունանում է. մոտենում ե աշնան պտուղները հավաքելու ժամանակը: Յեթե դասատուն դժվարանում ե պատմել, նա ոգտվում է տարրական դպրոցի դասարանների գրական քրեստումատիաներից, ընտրելով գրանցից համապատասխան հոդվածներ:

Մի յերկու որ նա պատմում է, հարց ու փորձ անում: Հետո արդին կարելի յե փորձել լավ, մատչելի հոդվածներ կարդալ: Պատմվածքների համաձայն յերեխաները շատ պարզ նկարներ են անում — ծառ, պտուղպատ, մարդ, տուն և այլն:

Պատմելու և կարդալու համար կարելի յե ոգտվել հետևյալ հոդվածներից և գրքույկներից:

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ Բ. ԽՄԲԻ ԴԱՍԱԳԻՐՔ

1. Մի գիշեր անտառում:
2. Մեր շունը:
3. Ճագարը:
4. Կանաչ քաղաք:

Գ. ԴԱՍԱՐԱԾՆԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

1. Կռունկներ:
2. Աշունն այգում:
3. Նոր շենքը:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐ

1. Թումանյանից:
2. Հասմիկի նամակը:
3. Թոշուններ:
4. Ծոլակի շապիկը:
5. Զեյրանի հիվանդությունը:
6. Շունն ու կատուն:

Բավական չե կարդալ և պատմել. անհրաժեշտ է հարցերի միջոցով՝ յերեխաներին նույնպես մասնակից դարձել պատմելուն, վեր հանել նրանց ապրումները, իմանալ նրանց տպավորությունները:

Յերեխաներին չպետք է ստիպել մանրամասն պատմել. բավական ե, յեթե կարդանան պատմածը կամ կարդացածը համառոտակի վերաբերդի: Այնունեալ պետք է աշխատել, վոր նրանք դասարանում պատմեն նաև լսած, և տեսած դեպքերի մասին: Պատմվածքների և հոդվածների շուրջը յերեխաներն իրենք ել մկառւմ են պատմել. նկարում են, տանում նաև ապլիկացիայի աշխատանքներ: Որինակի համար՝ տալիս են աշնան պատկերը:

Դետինը՝ ղեղին թղթից, յերկինքը՝ կապույտ, սև թղթից թոշուններ են կտրատում և կպցնում են յերկնքին. կանաչ թղթից՝ ծառեր, նույնպես կպցնում են Փօնին. թղթից կտրում են փոքրիկ տնակ, կպցնում են ծրարի մի անկյունին. ահա և վորսորդը, հետևյալ վաղող շունը և այլն, և այլն:

Ապլիկացիայի ձևով կարելի յէ արտահայտել մի շարք պատկերներ և յերեվույթներ. բնության պատկերների կենդանիների կյանքից, պատմվածքների պարզ բովանդակություն և այլն, և այլն:

Յերեխայի խռոքի զարգացման հետ սիասին պետք ե զարգացնել համար սրատեսությունը: Բավական չե կարողանալ նայել, անհամարժությունը և տեսածն անալիզի յենթարկել: Այդ հմտությունները զարգացնելու համար գործադրվող ամենանպատակահարմար փարժությունները նկարներ դիտելն եւ: Այդ տեսակետից եքսկուրսիաները նույնական զարգացնում են յերեխաների տեսնելու և դիտելու ընդունակությունները:

Նախկին այբբենարաններում հենց առաջին եջից ակսվում եր տառածանաչության նյութը, և վոչ մի նկար չեյիք գտնի պատմություններ կազմելու համար: Յերեխաների ստեղծագործական և լեզվական ունակությունները զարգացնելու համար համապատասխան նկարներ չկային դասագրքում: Դասագրքերից դուրս ուսուցիչը նույնպես գժվարանում եր նկարներ ճարեկ: Մինչդեռ վոչինչ չեր խանդարի այբբենարանի սկզբում, ինչպես և միջում, մի քանի հետաքրքիր նկարներ դնել—ամառը գյուղում, ճամբարում յերեխաները խաղում են, լողանում, պատմում են, կարդում, քաղաքի պատկերը, գյուղի պատկերը, կոլխոզի աշխատանքները և այլն, և այլն:



Նկարները նկարագրելիս նախ պետք ե յերեխաների ուշադրությունը կենարուացնել ցայտուն գեղքերի վրա, հետո միայն պետք ե անցնել մանրամասնություններին:

Խոշոր տեղ պետք ե տալ նաև նկարչական աշխատանքներին: Նկարչական պարապմունքներն ունեն այն խոշոր նշանակությունը, վոր յերեխաները մեծ հաճույքով են զբաղվում դրանով. այստեղ կաձևերի և գույների բազմազանություն, գծերի շեշտակիություն—դրանք բավականաչափ գրավիչ են յերեխաների համար: Դրանց հետ սիասին նկարչական պարապմունքներն ունեն նաև այն նշանակությունը, վոր յերեխաները կարծես թե իրենց ապրումները և մտապատկերներն աշխատում են նկարի մեջ արտահայտել, Յերեխաներին պետք ե հնարավորություն տալ յելույթները և գեղքերը պատկերել մանկական պարզ և անպանույն նկարների միջոցով: Խոշոր տեղ տալով յերեխաների նկարչական աշխատանքներին, պարզ ե, վոր պետք ե ոգտագործել նաև պատրաստի գեղեցիկ նկարները:

Ահա այդ բոլոր աշխատանքներով մենք յերեխային նախապատրաստում ենք դրագիտության պլոցեսը հեշտացնելուն:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում զասատուն յերեք չպետք ե աչքաթող անի իր առջև դրված հիմնական նպատակը—աժանդակել գրագիտության ուսուցմանը, ստեղծել բոլոր նա-

խապայմաններն այդ կարևոր պրոցեսը հեշտությամբ անցկացնելու համար, վորովհետև դպրոցական աշխատանքներում այդ ամենից գըժվարն եւ Ընդհանրապես՝ դպրոցական պայմաններում վոչ մի աշխատանք չպետք ե առանց նպատակադրման սկսել, մասնավորապես սկզբնական շրջանում—լինեն այդ աշխատանքները նկարչություն, կազմագորում, ապլիկացիա, զրույց թե ընթերցանություն:



Այդ շրջանում նման աշխատանքները, բացի այն, վոր մեծ արժեք են ներկայացնում յերեխայի ընդհանուր զարգացման տեսակներից, միևնույն ժամանակ պետք ե վարժեցնեն յերեխային այն ուղղությամբ, վոր նա պատրաստված լինի գրագիտության ուսուցման համար:

Որինակի համար, յերեխաներին դասարանի գույքը — սեղանը, գրատախտակը, աթոռը և այլն—ծանոթացնելուց հետո առաջարկվում են նկարել զանազան առարկաներ՝ սկսած ամենապարզից, սովորում են

նախ գծել հորիզոնական և ուղղահայաց գիծ: — | : Աշխատանքը կատարում են թե գրատախտակի վրա, թե իրենց տետրերում, հետո նկարում են աթոռ, լուսամուռ, մատիտ, դուռ և այլն: Այդ աշխատանքներով մենք պատրաստում ենք յերեխաներին ո, ա, ս, կ, հ, ու, վ և այլ առեր հեշտ ձեւակերպելու (որինակը տես 47 եջի նկարում):

Նախապատրաստական աշխատանքները կարող են շարունակվել 10—15 որ: Այդ կախված ե այն հանգամանքից, թե արդյոք մենք կարողացե՞լ ենք այդ ժամանակամիջոցում ստեղծել բոլոր անհրաժեշտ նախապայմանները գրադիտությունն անցնելու համար: Անհրաժեշտ նախապայմանները հետևյալն են:

1. Նախապատրաստական աշխատանքները պետք ե զարգացնեն յերեխաների բանավոր խոռքը: Յերեխաները կարողանան պարզ կերպով պատասխանել շրջապատի յերեսութների մասին տրված հարցերին, կարողանան պարզ կերպով արտահայտվել տեսածի և լսածի մասին, կարողանան համառոտակի պատասխանել պարզ հարցերին:

2. Նախապատրաստական աշխատանքները պետք ե զարգացնեն յերեխաների տեսողական և լսողական անալիզատորները: Ճշմարիտ ե, յերեխաները մինչև դպրոց դալը նույնպես տեսնում ե լսում ելին, սակայն դպրոցում այդ կարենոր գործողություններն այլ բնույթ են ստանում: Տեսնելու հետ կապվում ե դիտելու ընդունակությունը, լսելու հետ՝ լսածն ըմբռնելու: Յերեխան մինչև դպրոց դալը շատ բանի յենայում, բայց չի կարելի ասել, վոր բոլորն ել տեսնում ե, յեթե նույնիսկ մի շարք յերեկութների վրա նրա հայացքը կանդ ե առնում, այդ ել՝ վնչ դիտողի և ուսումնասիրողի հայացքով, այլ հետաքրքրությունից դրզված: Մենք պետք ե զարգացնենք նրա մեջ դիտելու ընդունակությունը, վորովհետեւ դասը, վորպես դաս, սկզբնական շրջանից պահանջում ե դիտելու այդ ըստունակության հետևյական զարգացումը:

Նույնը պետք ե ասել նաև լսելու մասին, յերեխան շատ բան է լսում, բայց մինչ դպրոց դալը յերեխան յերբեք իրեն պարտավոր չի համարել հաւելեալ լինելու այդ լսածի մասին, մինչդեռ դասի համականշական կողմերից մեկն ել այն ե, վոր այն բոլորն, ինչ վոր լսում ենա, պարտավոր ե լսել և այդ լսածի մասին հաշիվ տալ:

Դիտողականության և ուշադրության զարգացման խնդիրն ե դըրպում, վորոնք այնքան անհրաժեշտ են թե ընդհանրապես դասի ժամանակ և թե մասնավորապես գրադիտության ուսուցման ժամանակ:

3. Այնուհետև պետք ե զարգացնել յերեխաների մոտոր — շարժական ունակությունները, մասնավորապես մատների մանր մկանների: Այդ նպատակի համար խոշոր չափով պետք ե ոգտվել նկարչական,

ծեփի, հյուսելու և նման այլ աշխատանքներով: Յեթե յերեխանները կարողանում են այդ աշխատանքները տանել նշանակում ե գրագիտությունն անցնելու նախապայմաններ կան:

Այդ բոլորից հետո մենք անցնում ենք արդեն գրագիտության ուսուցման անմիջական աշխատանքներին: Առաջին խնդիրը բառերի ընտրությունն ե: Բառերը, մանավանդ սկզբնական շրջանում, պիտք ե կոնկրետ իմաստ արտահայտեն, բառերի հետ կապված գործողությունն ծանոթ: Դրա իմաստն այն ե, վոր յերեխան կարողանա պատկերացնել թե առարկան ե թե գործողությունը: Ակրգուական շրջանում՝ մինչև 20-րդ դասը, դեռ ել ավելին, չի հանձնարարվու գրագիտության ուսուցման ժամանակ վորպես որինակ վերցնել այնպիսի բառեր, վորոնց արտասանությունը և գրությունը համապատասխան չեն. որինակ՝ մարդ, վարդ, ոձ և այլն: Այդ շրջանում, մասնավորապես առաջին մի քանի դասում, պետք ե խուսափել նաև բազմավանկ և բազմատառ բառերից: Առաջին դասերի համար լնտրած բառերը պետք ե լինեն վոչ ավելի 2 վանկից (4 կամ 3 տառով): Յեթե բառն յերկվանկանի յե, պետք ե լինի բայց վանկերով, ինչպես, որինակ՝ գարի, արի, տարի, կարի և այլն: Յեթե բառը միավանկ ե, պետք ե ունենա փակ վանկ՝ որինակ՝ սար, մատ, տատ, պապ և այլն: Մինչև 10-րդ դասն ամեն կերպ պետք ե խուսափել 2 վանկանի բառերից մեծ բառեր լնտրելուց:

Բառերի ընտրության ժամանակ անհրաժեշտ ե նկատի առնել նաև նրանց ճիշտ գրելու սկզբունքը. այնուհետև ննջյունատառերի ճիշտ իմաստաը տալու տեսակետից սկզբնական շրջանում (մինչև 3—5 դասը) պետք ե խուսափել այն հնչյունատառերից, վորոնք ձեւակերպվութ են մեկից ավելի նշանով, հակառակ գեպքում յերեխայի մեջ չի ստեղծվում հնչյունի և տառի իմաստի միասնություն, առաջ ե գալիս միևնույն բառի հնչյունական և տառային կազմության անհամապատասխանության կասկածը:

**ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՍԿՄԱԼ ԳՐԱԺԱՆԱՅՇՅՈՒԽՆ ԱՌԱՋԻ
ԴԱՍԱՐԱՆՈՒՄ**

Առաջին որից, իհարկե, յերեխայի, ձեռքը չպետք ե տալ այբբենարան և կարգալ սովորեցնել, Յերեխաներին պետք ե զբաղեցնել մոտավորապես մի 10 որ: Այդ կախված կլինի նրանից, թե աշակերտները վորքան են նախապատրաստվել այդ աշխատանքը կատարելու համար: Յերեխաների համար այդ կլինի անցողական մի շրջան, վորի ընթացքում նրանք կիազմակերպվեն, կակսեն ընտելանալ դպրոցական կյանքին, կոլեկտիվ աշխատանքներին, մանավանդ յեթե նորեկներից շատերը մանկապարտեզներում չեն յեղած:

Այդ շրջանում ուսուցիչը պիտի աշխատի յերեխայի լեզուն բաց անել, վոր սովորաբար, առաջին որերն ամաչկոտ լինելու պատճառով զժվարանում և արտահայտվել: Սրան կարելի յե հասնել զրույցների միջոցով, վորոնք և կհեշտացնեն նրանց փոխված միջավայրի հետ հաշտվելուն, մյուս կողմից ել մոտիկություն առաջ կրերեն ուսուցչի և յերեխաների մեջ:

Նախապատրաստական այս աշխատանքի մի լավ կողմն ել այն ե, վոր ուսուցիչը հնարավորություն կունենա ծանոթանալ յերեխաների պակասավոր կողմերի հետ, ուրեմն և կպարզվի նրա համար, թե ինչ աշխատանք պիտի տանի տարվա ընթացքում այս կամ այն յերեխայի նկատմամբ:

Չպետք ե մոռանալ աչքն ու ձեռքը զարգացնելու աշխատանքը: Ուսուցիչը տալիս ե թուլթ, մատիտ և նկարել ե տալիս:

Նախքան կարգալ սովորեցնելը, յերեխաների ձեռքը դասագիրք տալը, ուսուցիչը պետք ե պատրաստ լինի ամեն կերպ այդ աշխատանքն սկսելու համար: Ամենից առաջ պետք ե լավ ուսումնասիրի այն դասագիրքը, վորով պիտի անցնի, ծանոթանա նրա կառուցվածքի հետ, հասկանա, թե ինչ մեթոդով ե կազմված, ինչ ե նրա առավե-

լությունը և թերությունը, վոր շատ կհեշտացնեն ուսուցչի հետագա աշխատանքները: Յերկրորդ՝ ուսուցիչը պիտի պատրաստ զիտողական պարագաներ, ամեն կերպաշխատելով դասը լավ պիտույքափորել: Առանց այդ պարագաների դասարատն մտնելը հանցանք պիտի համար վի ուսուցչի համար, և յերբորդ՝ ուսուցիչը պետք ե ունենա մանրա մասն կազմած ծրագիր, նույն իսկ հարց ու պատասխանով:

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Դրագիտության պրոցեսի ընթացքում գործադրվող ձևերի նկարագրությունից յերնում և գիտակտիկ նյութի խողոք նշանակությունը կարդալ սովորեցնելու գործում: Առաջին հերթին զիտակտիկ նյութերն ակտիվություն են առաջացնում աշակերտների մեջ և, կարևոր այն ե, վոր աշակերտներին ոժանդակում են գիտակցաբար տիրապետել կարգական պրոցեսին: Դիդակտիկ նյութերը թեթևացնում են դասատուի աշխատանքները: Դիդակտիկ նյութերն աշխատանքի մեջ մտցնում են նաև ինքնուսուցման տարրեր:

Դրագիտության պրոցեսում պահանջվող զիտակտիկ նյութերն այն ուսումնական պարագաներն են, վորոնք կազմակերպված կերպով գործադրվում են, վորպեսզի աշակերտներն ինքնուրույն կերպով յուրացնեն և ամբապնդեն ստացած կտաելիքները և ունակությունները, մշակեն նոր ունակությունները: Ուստի զիտակտիկ նյութերը, համաձայն այդ սկզբունքների, պետք ե բավարեն հետեւյլ պահանջները:

Առաջին՝ զիտակտիկ նյութերը պիտի լինեն վերին աստիճանի մատչելի յերեխաների հասկացողությանը և հնարավորություն ստեղծեն, վոր աշակերտներն ինքնուրույն կերպով աշխատեն այդ նյութերով:

Յերկրորդ՝ զիտակտիկ նյութերը պետք ե այնպես պատրաստել վոր աշակերտները գրանցով աշխատելիս հնարավորություն ունենան անցածը կրկնելու և վարժություններ կատարելու: Բառերը և բառամասերը (տառ, վանկ) պետք ե տրվեն զանազան կոմբինացիաներով և միքանի անդամ:

Դիդակտիկ նյութերի այդ հատականիշները հնարավորություն են տալիս մի կողմից, վոր դասատուն ֆրոնտալ աշխատանքի ձևերն ավելի բազմազան դարձնի, իսկ մյուս կողմից՝ աշակերտի աշխատանքների մեջ մտցնի բազմազանություն, հետաքրքրությունն և ինքնուրույնություն:

Թվում ենք այն անհրաժեշտ և մինիմում զիտակտիկ նյութերը, վոր գրագիտություն սովորեցնող յուրաքանչյուր դասատու պետք ե իր ձեռքի տակ ունենա թե իր և թե աշակերտների համար:

1. Պատին փակցնելու համար խոշոր և մանր այբբեն ու թվանշաններ:

2. Այբբենարանի առաջին դասելին համապատասխան բառեր և վանկեր — խոշոր տառերով՝ պատին փակցնելու համար:

3. Նկարներ՝ նախապատրաստական զրույցների համար (ամառային աշխատանքներ, աշնանային աշխատանքներ, ընտանիք, պիոնիրական ճամբար և այլն):

4. Հատվող տառեր և վանկեր՝ բառեր կազմելու համար — խոշոր՝ պլակատի վրա կազմելու և փոքր՝ տառերով աշակետներին բաժանելու հումար:

5. Փոքրիկ խորանարդներ — տառերով և վանկերով բառեր շարելու համար:

6. Լոտո — համաձայն դասագրքում զետեղված բառերի:

7. Քարտ — նկարներ առանց տեքստի և քարտ տեքստեր առանց նկարների՝ իրար մոտ դասավորելու համար:

8. Զանազան դժվարությունների կանոններ:

Այդ դիմակտիկ նյութերը, պարզ ե, վոր բոլորը միանգամից չեն դորձագրվում, պետք ե համարեցնել յուրաքանչյուր տառի պահանջներին: Հասավող տառերն ու վանկերն են, վորոնք դրեթե յուրաքանչյուր դասին պետք են, գալու:

ԳՐՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

Յերբ պետք ե սկսել զրության ուսուցումը:

Յեղիբապական մի շարք յերկրներում գրագիտությունն սկզբում անցնում են ձեռագրով: Այդ ուղղությանը հարող ուսուցիչներն այն արդյունահանում են բերում, թե կարդալու պրոցեսն իր եյությամբ ավելի հեշտ ե, քան գրելունը. գրելու պրոցեսը մոտորային պրոցես ե. մոտորային լինելով՝ ձեռագրի հնչյուններին տիրապետելն ավելի դժվար ե, քան կարդալուն տիրապետելը:

Հետևելով դիմակտիկական կանոնին, նրանք խորհուրդ են տալիս առաջ կարդալ սովորեցնել, ապա նոր գրել: Մինչև վերջին տարիները նույն կարծիքին են յեղել նաև խորհրդային վորոշ ականավոր մանկավարժ — մեթոդիստներ — Աֆանասյեվ, Շապոչնիկով և ուրիշները, վորոնք խորհուրդ եին տալիս մինչև 15—20 դաս անցնել տպագրելով, ապա նոր ծանոթացնել ձեռագրին: Սակայն վերջերս, բոլորովին այլ կարծիքի յեն նույն մեթոդիստները, նրանք առաջարկում են տպագրը և ձեռագրին անցնել միաժամանակ: Նույն կարծիքին ենք և մենք, վոր վոչ մի իմաստ չունի աշխատանքը բաժանել յերկու մասի. նախ անցնել տպագրիրը, այդ նշանակում ե, վոր վորոշ ժամանակ յերեխա-

ները վոչինչ չպետք ե գրեն. լավագույն դեպքում պետք ե արտանկարեն տպագիր տառերը: Այդ գրել չե. այլանդակ բան կստացվի մի աշխատանք, վորը վոչ մի իմաստ չունի: Այլ բան ե, յեթե տպագրերն իրենց ձեռագրին. մեր տառերի ձնշող մէծամասնության մեջ տպագրերը նմանություն ունեն ձեռագրին:

Ուստի պետք ե աշխատել տպագիրը և ձեռագիրը միաժամանակ անցնել:

Այժմ անցնենք այն պահանջներին, վորոնք առաջադրում են ձեռագրի ուսուցմանը:

Առաջին — տիրապետել գրելու տեխնիկային:

Եթեկրորդ — պահպանել գրելու առողջապահական կանոնները:

Եթրորդ — պահպանել ուղղագրական կանոնները:

Առաջին և յերկրորդ կարգի ունակությունները ձեռք են բերվում զրածանաչության ուսուցման շրջանում, իսկ վերջին աշխատանքները պահանջում են ավելի տևական ժամանակ:

Մենք կանգ կառնենք առաջին յերկու պահանջների վրա, վորոնք անմիջականորեն վերաբերում են գրածանաչությանը:

Անհրաժեշտ ե հենց սկզբի որերից գրելու պրոցեսն իմաստալից դարձնել յերեխաների համար: Յերեխան հաճույքով գրում ե այն, վոր նրա համար հասկանալի յե, ինչ վոր ինքը հասկանում ե: Այդ ժամանակ աշխատանքը նրա համար վորոշ հետաքրքրություն և ներկայացնում:

Յերեխաները պետք ե գիտենան, վոր տառերով նրանք ձեակերպում են վորոշ մտքեր:

Սակայն այդ չի նշանակում, վոր առաջին որվանից յերեխաները պետք ե սկսեն ամբողջական բառեր գրել: Մենք տեսանք, վոր մինչև գրագիտությունն սկսելը նախապատրաստական լուրջ աշխատանք պետք ե տանել: Նախապատրաստական աշխատանքների ընթացքում յերեխայի լեզվի զարգացման հետ զուգանում են նաև նրա մյուս անալիզատորները — նրա մոտորային շարժումները, զարգանում են նրա ձեռքի և մատների փոքր մկաններ՝ շնորհիլ նկարչական և այլ աշխատանքների:

Գրելու նախապատրաստական աշխատանքները չեն սահմանափակվում միայն նրանով, վոր յերեխայի աշքը կարողանա պատկերացնել առանձին տառերի գրագիր ձեռերը. անհրաժեշտ ե զարգացնել նաև նրա ձեռքերի և մատների մկանները, զանազան ելեմենտներ ձեակերպելու վարժություններ և ունակություններ ստեղծելու համար: Այդ ձեռք ե բերվում ավելի ուժեղ չափով նկարչության միջոցով, վորը գրագիտության պրոցեսում, մասնավորապես ձեռագրի ուսուցման գործում, եյական նշանակություն ունի, նույն նպատակին ոժանդակում են ձեռքի

մյաւս աշխատանքները — ապլիկացիոն աշխատանքները, ծեփելը, կըտերելը և այլն:

Որինակի համար, զանազան նախշեր նկարելը մեծ չափով ոժանդակուուն և ձեռագրի ուսուցմանը:

Յերեխաներին տրվում են նաև առանձին տառեր գրելու վարժություններ: Գրավոր աշխատանքների տեսությունը 10—15 րոպեյից ավելի չափեաք ելինի, վորագնությունը ձանձրությունը չպատճառեն:

Զեռագրի տեխնիկայի զարգացման ուղղությամբ անհրաժեշտ են ձգտել, վոր աշակերտները ձեռք բերեն պարզ, գեղեցիկ և արագ գրելու ունակություններ, վորովինեաւ այդպիսի գրությունը միայն կարող ե կուլտուրական մարդու գրությունն համարվել: Միանգամայն սխալ և ֆասակար պետք ե համարել այն տեսնդենցը, վորով անուշադրության են մատնում ձեռագրի տեխնիկայի զարգացման անհրաժեշտությունը: Ի՞նչ իրավունք ունենք ընթերցողից պահանջելու, վոր նա ավելորդ վեամանակ վատնի դժվար ընթեռնելի գրության վրա: լավ չե՞ր լինի արդյոք, վոր ընթերցողն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացներ միայն բովանդակության վրա:

Դրելու տեխնիկայի առաջին նախապայմանը ճիշտ գրելն եւ իսկ ճիշտ գրել ասելով մենք հասկանում ենք.

1. Տառերը չեղուին սահմանված ուղղությունից.

2. Տառերն ունենան միատեսակ ուղղություն (կուգահեռ հորիզոնական և զուգահեռ թեքություն).

3. Տառերն ունենան սահմանված միատեսակ բարձրություն.

4. Պահպանված լինի տառերի ելեմենտների ճշտությունը.

5. Բարի մեջ պահպանված լինի տառերի հեռավորությունն իրարից.

6. Պահպանված լինի տողի վրա բառերի հեռավորությունն իրարից:

Այդ պահանջները բավարարելուն պետք ե գասատուն հետապնդի հնաց առաջին որերից, վորպեսզի կարողանա յերեխաների մեջ ճիշտ և կանոնավոր գրելու ունակություններ զարգացնել:

Արագ գրել մեծ չափով պայմանավորվում ե ժամանակով. ատարեր ետապներում տարբեր են լինում և արագությունը. արագ գրելու ունակությունները ձեռք են բերվում աստիճանաբար:

Սկզբնական շրջանում յերեխայից չպետք ե պահանջել ավելի արագ գրել, քան նա կարող ե գրել տվյալ շրջանում: Ցերբեթ չպետք ե արագությունը զարգացնել ճշտության հաշվին:

Այնուհետև, ճիշտ գրելու համար անհրաժեշտ ե, վոր սկզբնական շրջանում տառերը գրվեն տողի մեջ. տողերի հեռավորությունը 5 մմ պետք ե լինի:

Ի՞նչպես պետք ե անցնել գրելու անմիջական պրոցեսին: Այստեղից

առաջին հերթին անհրաժեշտ ե յերեխաներին սովորեցնել գրելու ժիքները (մատիտ և գրիչ), տեսրը բունելու, գրելիս նստելու յեղանակը, գրիքը: Համառորեն պետք ե հետապնդել վոր յերեխաները ճիշտ բունենքը իրին ու մատիտը: Անա տեսրը ու գրիչը բոնելու հիմնական կանոնները:

1. Տեսրը պետք ե գրված լինի սեղանի վրա յերեխայի առջև և համապատասխանի իր անկյունով մարմնի միջին գծին:

2. Գրչածայրի ծայրը ցուցամատի բունած տեղից պետք ե մոտ 3 մմ հեռավորության վրա լինի: Գրչածայրի ուղղությունը պետք ե համապատասխանի ձեռքի ուղղությանը և լինի նրա շարունակությունը:

Ինչպես գերեսում ասել ենք՝ գրելուն նախորդում են նկարչական աշխատանքնորը: Նկարչական պարզ աշխատանքների միջոցով յերեխաները նախորդ վարժվութեամբ են մի շաբաթ տառերի ելեմենտները գրելուն: Այնուհետև, յերբ սկսում են կարդալ, անցնում են կարդացած բառը գրելուն, յուրաքանչյուր անդամ նոր սովորած տառն առանձին գրելով:

Բնական ե, վոր այդ բառերը լինում են փոքր, միավանկ բառեր: Դասառուները հաճախ եարց են տալիս՝ մազադերմի գրել, թե առանց մազագների Այն տառերը, վորհնք մազագներ ունեն, ինարկե պետք ե գրվին մազագներով, որինակի համար՝ ա, ս, ի, ո: Առաջին տարին բառերի մեջ տառերն անջատ են գրվում:

Գրաճանաչությունը պետք ե սովորեցնել վերլուծական-համագրական (անալիտիկ-սինտետիկ) մեթոդով: Ուսուցիչն ամեն մի նոր տառ սովորեցներին և ետք ե բառը յենթարկի վանկային և հնչյունակ ոն վերլուծության: Առաջին որվանից հենց բառը պետք ե վերլուծել վանկերի և հնչյունների, հետո հատկող տառերից աշակերտներին կազմել տալ վանկեր և վանկերից բառ, վորից հետո կարելի յե դիմել գրքին և բառը կարգալ տալ: Նշանակում ե՝ պրոֆ. Աֆանասեի մեթոդիկայով առաջնորդվողները «Աշխատանք ամբողջական բառերով» գուցմունքի (եջ 44, հրատ. 1935 թ.) չպետք ե կիրառեն (տես. Լաւմողկումատի մեթոդական՝ ցուցմունքները, հրատ. 1936 թ.):

Դժբախտաբար մեր այբբենաբաններն ամբողջովին այս մեթոդով չեն կազմված, ուրեմն և մեծ զժվարություն են պատճառելու ուսուցիչներին: Տակ բառը գժվար ե այդ ձևով վերլուծել, գժվար և սկզբում և տառը առանձին հնչել տալ և զժազրել, մյուս կողմից և յերկանչան ու թյուրիմացություն և առաջացնում:

Հայրապետյանի և Խուդայանի կազմած այբբենաբանն սկսվում ե սարբառով, վորը նույնպես վանկերի չի բաժանվում, բայց և այնպես անհամեմատ հեշտ և նրա հնչյուններն առանձին-առանձին ասել և զժազրել տալ:

«Կատու»

Դասի համար պատրաստել հետեւյալ դիտողական պիտույքները.

1. Նկար՝ կատուն հարձակվում ե մկան վրա.

2. Կատուն առանձին նկարած.

3. Հատվող տառեր.

4. Սովարաթղթի առանձին թերթիկների վրա գրած կա, ու.

5. Առանձին սովարաթղթի վրա գրած կատու. կ տառը կարմիր թառաքով գրած:

Նախքան կատու բառը վերլուծելը և կ հնչյունի հետ ծանոթացնելը, պետք ե կազմակերպել զույց մոտավորապես հետեւյալ բովանդակությամբ.

— Յերեկ ձեզ հետ մեծ դասամիջոցին ինչ խաղ խաղացինք:

— Մուկն ու կատուն.

— Ի՞նչ բառ պետք ե դնել այս նկարի տակ:

— Մուկն ամբողջ բառն ասացեք (ասում են):

— Լսեցեք, թե սար ասելիս առաջ ինչ ձայն եմ հաճում—սսսար:

— Ա:

Ուսուցիչը ցույց է տալիս ս տառը.

— Ամենք միասին ասացեք,—ցույց տալով ս տառը:

— Այժմ ամբողջ բառն ասացեք (ասում են):

— Լսեցեք, թե և ից հետո ինչ եմ ասում—սսաար:

— Ա.

— Միասին ասացեք,—ցույց տալով ա տառը:

— Հիմա լսեցեք, ինչ ձայն եք լսում վերջը—սարը:

— Ռ.

— Միասին ասացեք,—ցույց տալով թ տառը:

— Ասացեք ամբողջ բառը (ասում են):

— Ի՞նչ հնչյուններ սովորեցինք (ասում են):

— Ո՞վ կարող է հատվող տառերից կազմել այդ բառը (մի քանի հոգի կազմում են):

— Քանի տառից ե կազմված այս բառը:

— Յերեք:

— Վորն ե առաջինը, յերկրորդը, յերրորդը:

Ուսուցիչը նորից տալիս ե յերեխաներին հատվող տառեր և առաջարկում կազմել այդ բառը, հետո կարդալ տալիս:

Այս բոլորից հետո կարելի յե բաց անել տալ այբբենարանը և առաջին յերեսի վրա կարդալ տալ ուստ բառը:

— կ.

Ուսուցիչը ցույց ե տալիս կ տառը։ Նորից առաջին վանկն արտասա-
նում ե և հարցնում յերկրորդ ձայնը, հետո միասին ասել տալիս կա
ձեռքին բոհած պահելով ստվարաթղթի վրա գրած կա վանկը։

— Ասացեք յերկրորդ վանկը։

— Տու.

Ուսուցիչը ցույց ե տալիս.

— Յեկեք կազմեցեք այդ բառը (կազմում են)։

— Ասացեք միասին (ասում են)։

— Այսոր ի՞նչ նոր տառ սովորեցինք։

— Կ.


— Ասացեք կատու բառը վանկերով (ասում են)։

— Ասացեք ամբողջ բառը (ասում են)։

Հետո ուսուցիչը բաց անել ե տալիս գրքերը և առաջարկում աշա-
կերտներին կարդալ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դախարան	2
Գ. Սովորության	2
Աղոփ-Սևծովյան յերկրամասի հայկական դպրոցների 1935—36 ուստարվա- քնանական թելադրությունների անալիզի արդյունքները	3
Հնչյունական տիպի սիմեր	4
Պատմական տիպի սիմեր	11
Քերականական տիպի սիմեր	12
Զեռագիր	14
Ակերպան	15
Ցեղակացություն	16
Առաջարկություն	16
Կըճառումներ	17
 Դ. արիքյան	 18
Սիալները վերացնելու միջոցները	18
Բարբառային տիպի սիմեր վերացնելու միջոցները	40
 Խոռոչոյան	 42
Գրագիտության ուսուցման նախասպարաստական աշխատանքը	42
Ա. Տ. Հարությունյան	50
Ցեր և ինչպես սկսել գրաճանաչությունն առաջին դասարանում	51
Դիբակտիկ նյութերի ոգտագործումը	51
Գրության ուսուցմանը	52





Ответ. редактор А. Г. Аваков
Пом. техред. Д. М. Джинибалаев

Сдано в набор 3 сентября 1936 г. Подписано в печать
5 сентября 1936 г. Формат А5—101x144 Об'єм 3³/₄
п. л. Тираж 2000. Уполномочен № С-5687. Занес № 373.

Типография краевого армянского изд. ГРО^{**}
Ростов-Дон, Ворошиловский пр., № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0247112

ԳՐԱՅԻ
Цена 1 ₾ 50 կոպ.

411483

На армянском языке

ПРЕПОДАВАНИЕ РОДНОГО ЯЗЫКА
(Методический сборник)

Педагогическая лаборатория
при Азово-Черномор. Крайоне

0106089-6

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“
Ростов н-Д, Ворошиловский, 27

Դ Ր Ա Պ Ա Հ Ե Ս Ց Ց
Թատով-Դոմ, Մուսովակայա փող. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՐԻԳԱՑԵՆՏՐՈՆ)